

**ՄԱՍԼՈՅ
ԱՐՁԱԿՈՒՐ**

Ս. Աստուածածայ Աւետման տօնին առիթով եւ համաձայն Մամլոյ սենտիբայի որոշումին, «Ազոյակ» լոյս պիտի չտեսնէ Աւագ երեքշաբթի, 26 մարտ 2024-ին: Մեր յաջորդ թիւը՝ Աւագ չորեքշաբթի, 27 մարտ 2024-ին:

50.000 Լ.Ո. 98-ԲԿ ՏԱՐԻ, ԹԻԻ 18 (26525) ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 25 ՄԱՐՏ 2024 8 ԷՋ

**ՌՈՒՄԱՆՈՅ ՄԷՋ ՄԿԱՆԸ Ե ԵՐՐՈՊԱՅԻ
ՄԷՋ ՕԹԱՆ-Ի ՄԵՃԱԳՈՅՆ
ՌԱԶՄԱԿԱՅԱՆԻ ԿԱՌՈՒՑՈՒՄԸ**

Ռումանիոյ մէջ սկսած է կառուցումը Եւրոպայի մէջ ՕԹԱՆ-ի մեծագոյն ռազմականացումը, որ աւարտուած է 10 հազար զինուորի համար: Այս մասին հաղորդեց «Եւրոնիւզ»-ը: Ռազմականացումը կառուցուցողը կը գնահատուի 2,5 միլիարդ Եւրոյով: 2,8 հազար հեկտար տարածքով ռազմականացումը կը զբաղեն Քոնսթանցա թաղամասին մէջ, ուր կը գտնուի Սէն ժովու վրայ Ռումանիոյ նաւահանգիստը:

**ՄԱԿ-Ի ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԳԻՆ
ՄԷՋ ԿԱԶՄՅՈՒ ԿՐՏՈՎ ՆԱԽԱԳԻԾԻՆ
ՇՈՒՐՁ ՔՈՒԷԱՐԿՈՒԹԻՒՆԸ
ՅԵՏԱԶԳՈՒԵՅԱԻ ԱՅՍՕՐՈՒՄ**



Դիւանագիտական աղբիւրներ ԱՖՓ լրատու գործակալութեան յայտնեցին, որ շաբաթ օր ՄԱԿ-ի Ապահովութեան խորհուրդին մէջ ոչ մայրուս անդամներուն կողմէ ներկայացուած նախագիծի շուրջ քուէարկութիւնը յետաձգուած է

այսօրուան՝ փորձելով խուսափիլ ուրբաթ օրուան ծախողութեան կրկնութենէն, երբ Ռուսիան եւ Չինաստանը վեթոյի ենթարկած էին Նոյն հարցով ամերիկեան նախագիծը:

Շար.ը՝ էջ 8

**ՄԵՏՎԵՏԵԻ «ՔՐՈՔՈՒՄ ՍԻԹԻ ՀՈՒ»-Ի ՎՐԱՅ
ՅԱՐԶԱԿՈՒՄԻՆ ԲՈՒՈՐ ՄԵՂՍԱԿԻՑՆԵՐԸ՝ ԱՆԿԱՆ
ԾԱԳՄԱՆ ԵՐԿՐԵՆ ԵՒ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԵՆ, ԱՅՍՈՒՆԵՏԵԻ
ՄԵՐ ՕՐԻՆԱԿԱՆ ԵՒ ՀԻՄՆԱԿԱՆ ԹԻՐԱՄՆ ԵՆ»**

Ռուսիոյ Անվտանգութեան խորհուրդի փոխնախագահ, նախկին նախագահ Տիտի Մետվետեի, անդամացած մերձմոսկովեան «Քրոքու Սիթի Ղոյ» համալիրին մէջ տեղի ունեցած ահաբեկչութեան՝ յայտարարեց, որ բոլոր մեղսակիցները՝ անկախ ծագման երկրէն եւ կարգավիճակէն, այժմ մեր օրինակն են: իմաստական թիրախն են: Սպասեցէ՛ք, վիժուածքներ», թելեկրամեան ալիքին վրայ գրեց Մետվետեի:

Ռուսիոյ Անվտանգութեան խորհուրդի քարտուղար Նիքոլայ Փաթրուշեւ իր կարգին յայտարարեց. «Անկախած, մարդոց զանգուածային մահերու մեղաւորները անպատիւ պիտի չմնան»:

Փաթրուշեւի կարծիքով՝ այս իրադարձութիւնը ցոյց կու տայ, որ ահաբեկչութիւնը անվտանգութեան սպառնալից կը հանդիսանայ:

Յիշեցնենք, որ 22 մարտի երէկոյան խումբ մը գիւնեալներ կրակ բացին Մոսկուայի «Քրոքու Սիթի Ղոյ»-ի մէջ, որմէ ետք տեղի ունեցաւ պայթում եւ հրդեհ բռնկեցաւ: Կը հաղորդուի առնուազն 137 գոյի եւ 152 վիրաւորներու մահին:

Ռուսիոյ Անվտանգութեան դաշնակցային ծառայութիւնը յայտարարեց, որ գիւնեալները ձերբակալուած են Ռուսիոյ Պրիստեպ շրջանին մէջ՝ Ուքրանիոյ հետ սահմանին մօտ, եւ անոնք կը մեկնեն Ուքրանիա, որովհետեւ «այս տեղ կապեր ունին»: Ընդհանուր առմամբ ձերբակալուած են 11 անձեր:

Ռուսիոյ ներքին գործոց նախարարութիւնը յայտնեց. «Պրիստեպ շրջանին մէջ ձերբակալուած չորս անձերը օտարերկրացի քաղաքացիներ են»:

Ռուսիոյ նախագահ Վլադիմիր Փութինի համաձայն, ահաբեկչութեան համար կապակաշտողներու օգտին «պատուաւ պատրաստուած էր Ուքրանիոյ հետ սահմանը անցնելու համար»:

Ուքրանական հետախուզութիւնը յայտարարեց, որ Ռուսիոյ տարածած վարկածը, թէ Մոսկուայի մարզին մէջ ահաբեկչութեան հեղինակները Ուքրանիա փախուստի կը դիմէին, իրականութեան չի համապատասխանէ:

Նշենք, որ «Ռաշա Թուտեյ» շաբաթ օր հաղորդեց, որ փորձաքննութեան յայտնաբերած են, որ «Ռոյթթըր» լրատու գործակալութեան ուրբաթ օր իրապարակած ՏԱՅԵՇ-ի Մոսկուայի մէջ յարձակումին պատասխանատուութեան տեսնածնալ յայտարարութիւնը կեղծ է եւ չի համապատասխանէր ահաբեկչական խմբաւորման նախապետ իրապարակած հաղորդագրութիւններուն, ինչպէս նաեւ ՏԱՅԵՇ-ի լրատու գործակալութեան կողմէ չէ իրապարակուած: ՏԱՅԵՇ-ի «Ամմաթ» լրատու գործակալութիւնը, սակայն, երէկ յարձակումին տեսագրութիւնը իրապարակեց:

**ՉԵԼԵՆՍԻ. «ՓՈՒԹԻՆ ԿԸ ՓՈՐՁԵ ՄՈՍԿՈՒՍԻ ՄԵՋ
ԿԱՏԱՐՈՒՄԸ ԲԱՐՐԵՆ ՈՐԻՇԻՆ ՎՐԱՅ»**

«Քորրեպիստենթ» հաղորդեց, որ Ուքրանիոյ նախագահ Վոլոտիմիր Չելենսքի, անդամացած մերձմոսկովեան «Քրոքու Սիթի Ղոյ» համալիրի մէջ տեղի ունեցած ահաբեկչութեան, յայտարարած է. «Ավայայտ է, որ Փութինն ու միւս տակաւները երէկ Մոսկուայի մէջ կատարուածը կը փորձեն ուղղակի բարդել ուրիշի վրայ: Անոնք միշտ Նոյն մեթոտները կը կիրառեն: Նման քան արդէն եղած է՝ թէ՛ պայթեցուած տուներ, թէ՛ գնդակահարութիւններ, թէ՛ պայթումներ: Եւ անոնք միշտ ուրիշները կը մեղադրեն»:

Ան նշած է, որ ռուսերը Ուքրանիա եկած են, քաղաքները կ'այրեն եւ կը փորձեն Ուքրանիան մեղադրել: «Անոնք կը խոշտանգեն, բռնութեան կ'ենթարկեն ժողովուրդը եւ զանոնք իսկ կը մեղադրեն: Իրապարակելով ահաբեկչները բերած են այստեղ՝ Ուքրանական հող, անոնք մեր դէմ կը կռուին, եւ իրենց չի հետաքրքրեր, թէ իրենց երկրին մէջ ի՞նչ կը կատարուի: Երէկ այս ամէնը

տեղի ունեցած է, եւ այդ ոչնչութիւնը՝ Փութինը, փոխանակ Ռուսիոյ քաղաքացիներով զբաղելու, անոնք դիմելու, մէկ օր լռեց՝ մտածելով, թէ ինչպէ՛ս ատիկա ուղղէ Ուքրանիոյ կողմը: Ամէն ինչ շատ կանխատեսելի է», քսած է Չելենսքի:

«Եւ եթէ ռուսերը պատրաստ են լուռ մենկի «քրոքուներու մէջ» եւ որեւէ հարցում չուղղել իրենց զարտի սպասարկութիւններուն, ապա Փութին պիտի փորձէ նման իրավիճակները օգտագործել իր անձնական իշխանութեան օգտին», եզրափակած է Չելենսքի:

**ԱՅԱԲԵԿՉՈՒԹԵԱՆ ՄԵՎ ԿՈՍՏՈՎԱՆԱՍԸ Ե,
ՈՐ ԵՎԱՏ Ե ԹՈՒՐԻՅԱՆԵՆ**

«Ռաշա Թուտեյ»-ի գլխաւոր խմբագիր Մարկարիթա Սիմոնեան իր թելեկրամ ալիքին վրայ իրապարակած է Մոսկուայի մէջ յարձակումին մասնակցող ահաբեկիչներէն մեկուն հարցաքննութեան ամբողջական տեսանկիւրը:

Ահաբեկիչը պատմած է, որ 4 մարտին եկած է Թուրքիայէն, իսկ ահաբեկչութեան մասնակցելու ցոյցմուտը ստացած է շուրջ մէկ ամիս առաջ՝ «քարոզիչ»-ի մը օգնականէն, որ իրեն հետ կապուած է թելեկրամի փոխոցով:

Ահաբեկիչին համաձայն, զանգուածային սպանութեան համար իրեն առաջարկած են շուրջ կէս միլիոն ռուբլի, սակայն ան միայն կ'եղ ստացած է, իսկ այդ գումարով քարոզ կորսնցուցած է փախուստի ժամանակ:

**ՊԻՆԵՐԸ. «ՄԻԱԿՍԵՆ ԱՆՅԱԳՆԵՐ ԲՈՒՈՆ ԿԵՐՊՈՎ
ԿԸ ԴԱՏԱՊԱՐՏԵՆ ՄՈՍԿՈՒՍԻ ՄԵՋ ԱՅԱԲԵԿՉՈՒԹԵԱՆ»**

Միացեալ Նահանգներու խստօրէն կը դատաւարեն Մոսկուայի մէջ տեղի ունեցած ահաբեկչութիւնը: Շաբաթ օր այս մասին յայտարարեց Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարար Էնթոնի Պինըրը:

«Մենք մեր խոր ցաւակցութիւնը կը յայտնենք գոհածներու ընտանիքներուն, մերձաւորներուն եւ բոլորին, որոնք վստահուած են այս սարսափելի յանցագործութեան», նշեց ամերիկեան դիւանագիտութեան պետը:

Պինըրը ակեցուց, որ Ուաշինթընը կը դատաւարտէ ահաբեկչութիւնը իր բոլոր դրսեւորումներով եւ համերաշխութիւնը կը յայտնէ Ռուսիոյ ժողովուրդին՝ սզալով գոհածներուն համար:

Սպիտակ տան բանբեր Քարին Ճան-Փինե իր կարգին յայտարարեց. «Միացեալ Նահանգներ խստօրէն կը դատաւարեն Մոսկուայի մէջ տեղի ունեցած սարսափելի ահաբեկչութիւնը: Մենք մեր խոր ցաւակցութիւնը կը յայտնենք անոնց, որոնք կորսնցուցած են իրենց հարազատները եւ անոնք, որոնք վիրաւորուած կամ վնասուած են անմեղ քաղաքացիներ անձերու վրայ այս անարգ յարձակումներուն պատճառով: ՏԱՅԵՇ-ը ահաբեկչութեան հասարակաց թշնամի է, որ պետք է ամէնուր պարտուի»:

ՄԱԿ-ի ընդհանուր քարտուղարը եւ աշխարհի բազմաթիւ երկիրներ, Ներառեալ Բրիտանիան, Ֆրանսան ու Գերմանիան դատաւարտած են ահաբեկչութիւնը:

Միացեալ Նահանգներու Ազգային անվտանգութեան խորհուրդի բանբեր Լեորիլը Ուոքսըն յայտնեց. «Միացեալ Նահանգներու կառավարութիւնը այդ տեղեկութիւնը փոխանցած էր Ռուսիոյ իշխանութիւններուն»՝ նախագոզուածնալ պարտաւարտութեան» իր քաղաքականութեան համապատասխան»:

«Ուոլ Սթրիթ ճըռնըլ», մշտերեզով անոր խօսքերը, կը պարզաբանէ, որ ամերիկեան գաղտնի սպասարկութիւնները՝ հաւաքելով յարձակումներու կամ ահաբեկչութեան մասին հաւաստի տեղեկութիւններ, անոնց մասին կը նախագոզուածնալ այդ երկիրները, որոշ պարագաներով՝ Նոյնիսկ հակառակորդները:

Ամերիկացի պաշտօնատարին համաձայն, Միացեալ Նահանգներ այս ամտան սկիզբը Ռուսիոյ հետախուզական տուեալներ փոխանցած էին նախապատրաստուող յարձակումին մասին: Մտաւորապէս այդ շրջանին Ռուսիոյ մէջ Միացեալ Նահանգներու ղեկավարատուելը ամերիկացի քաղաքացիները զօրուցուցած էր՝ խուսափելու մեծ հաւանքներու, Ներառեալ ահաբեկչութեան մասնակցելու:

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԳՈՒՆԵՅ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԵՐԵՔ ԿՈՒՍԱԿՅՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ
ԼԻԲԱՆԱՆԻ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՅԻՉՆԵՐԸ**

Շաբաթ, 23 մարտ 2024-ին, Արամ Ա. վեհափառ հայրապետին այցելեցին հայ քաղաքական երեք կուսակցութիւններու Լիբանանի ներկայացուցիչները՝ Վահկի Տագետեան (ՍԴՅԿ), Յակոբ Բագրատունի (ՀՅԴ) եւ թիշի Աւետիս Տագետեան (ՌԱԿ):

Կուսակցութիւններու ներկայացուցիչները վեհափառ հայրապետին պարզեցին Հայոց ցեղասպանութեան 109-ամեակին առիթով քաղաքական երեք կուսակցութիւններու նախաձեռնութեամբ տեղի ունենալիք աշխատանքները եւ ժողովրդային ձեռնարկները:



Նահայ մեր ժողովուրդի զաւակներուն մասնակցութեան անհրաժեշտութիւնը Ապրիլ 24-ի առիթով տեղի ունենալիք ձեռնարկներուն, ինչպէս նաեւ կայանալիք եկեղեցական ու ժողովրդային հաւաքներուն՝ ցոյց տալու մեր շրջապատին ու յատկապէս ցեղասպաններուն, մեր ժողովուրդին հաւաքական կամքն ու պահանջատիրական անկուռ ոգին:

**ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԱՅՐԱՎԱՆՔԸ
ԾԱՂԿԱԶԱՐԴՈՒԵՅԱԻ
ՀԱԶԱՐԱՒՈՐ ՀԱՅՈՐԳԻՆԵՐՈՒ
ՄԱՍՆԱԿՅՈՒԹԵԱՄԲ**



Կիրակի, 24 մարտին, Անթիլիասի մայրավանքը ծաղկազարդուցեալ հազարաւոր հայորդիներու ներկայութեամբ: Նախագահութեամբ Արամ Ա. վեհափառ հայրապետին, Ծաղկազարդի սուրբ եւ անմահ պատարագը մատուցեց Շահան արք. Սարգիսեան:

Պատարագին յաջորդեց մանուկներու բազմամարդ թափօրը: Այնուհետեւ Արամ Ա. կաթողիկոս վեհարանէն օրինեց մայրավանքի շրջափակին մէջ հաւաքուած ժողովուրդը:

Մանրամասնութիւնները՝ յաջորդի:

**ՈՍՏԻԿԱՆՈՒԹԻՒՆԸ 49 ՀՈՐԳԻ ԶԵՐԲԱԿԱՆԵՑ
«ՄԱՐՏԱԿԱՆ ԵՐԱՎՅՐՈՒԹԻՒՆ» ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵՆԸ**

**3 ԶԻՆՈՒՎԾ ԱՆՉԵՐ ԅԱՐԶԱԿԵՅԱՆ
ՆՈՐ ՆՈՐՔԻ ՈՍՏԻԿԱՆԱՏԱՆ ՎՐԱՅ**

Հայաստանի ներքին գործոց նախարարութեան ոստիկանութիւնը ապօրինի զէնք-զինամթերք պահելու եւ կրելու կասկածանքով երէկ բերման ենթարկուած է 49 անձ:

«Արմենփրես»-ին այս մասին յայտնեցին Հայաստանի ներքին գործոց նախարարութեան:

«Մարտական եղբայրութիւն» կազմակերպութենէ յայտարարած են, որ բերման ենթարկուածները իրենց կազմակերպութեան անդամներն են: Ձերբակալուածները կը պատրաստուէին երթալ Տաուշի Ոսկեպար գիւղը:

Աւելի կանուխ Հայաստանի Հանրապետութեան մարդու իրաւունքներու պաշտպանի գրասենեակը յայտարարութիւն տարածած էր՝ յայտնելով, որ պաշտպան Անահիտ Մանասեանի յանձնարարութեամբ արագ արծազանգման խումբեր մեկնած են ոստիկանութեան բաժինները:

Այլ իրադարձութեամբ մը, երէկ աւելի ուշ, ժամը 17:00-ի սահմաններուն մէջ, 3 քաղաքացիներ զինուած փորձած են ներխուժել ներքին գործոց նախարարութեան ոստիկանութեան Նոր Նորքի բաժնի վարչական շէնք, գործածած են նռնակ, որուն պատճառով ներխուժող անձերէն 2 հոգի վիրաւորուած են եւ տեղափոխուած բժշկական հաստատութիւն: «Արմենփրես»-ի փոխանցումով՝ այս մասին հաղորդագրութիւն տարածած է ներքին գործոց նախարարութիւնը:

Միջադեպին վերաբերել հաղորդագրութիւն տարա-



ձած է նաեւ Երեանի քաղաքապետարանը՝ նշելով, որ Նոր Նորքի ոստիկանութեան բաժնամուտի տարածքին մէջ տեղի ունեցած միջադեպէն ետք «Շտապօգնութեան» ջոկատներէն մէկը 2 քաղաքացի բեկորային վնասուածքներով տեղափոխուած է բժշկական հաստատութիւն: Աւելի ուշ Ազգային անվտանգութեան ծառայութիւնը հաղորդեց, որ վնասագործած է կալանաւորած է նռնակներով զինուած երրորդ անձը: Յարուցուած է ջրտակա գործ՝ ահաբեկչութեան յանցանքով:

ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ԲԱՆԱԿԸ ԴԱՐՁԵԱԼ ՌՄԲԱԿՈՑԵՑ ՊԵՔԱՆ



Իսրայելեան բանակը շաբաթ կէս գիշերին եւ երկ դարձեալ մը բակոնումներու թիրախ դարձուց Պեքան:

Շաբաթ կէս գիշերին իսրայելեան ուժեր մը բակոնումները պատճառեցին երեք վիրաւորներ:

Ի պատասխան Պալապեքի մը բակոնումին, Դիմադրութիւնը կիրակի առաւօտեան կանուխ ժամերուն «Քաթիուշա» տիպի աւելի քան 60 հրթիռներով մը բակոնոց իսրայելեան Երու դիրքն ու Քալաա գօրանոցը, ուր իսրայելեան «Վոյանի» ընտրանի ջոկատը մարդումներու կ'ենթարկուէր: Ռմբակոնումները արձանագրեցին ուղղակի հարուածներ եւ պատճառեցին սիրիական եւ մարդկային վնասներ:

Շաբ.ը՝ էջ 8

ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ԴԱՏԱԲԱՐՈՒԹԻՒՆԸ ՅԼՆՁՆԱՐԱՐԵՑ ԻՍՐԱՅԷԼԻ ԳԷՄ ԲՈՂՈՔԷԼ՝ ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ ՄՕՏ



Արտաքին գործոց եւ արտերկրի լիբանանցիներու հարցերու նախարարութիւնը Եւրոպայի մէջ Լիբանանի մայրաքաղաք Երւսաղէմէն իսրայելի դէմ բողոքել՝ ՄԱԿ-ի Ապահովութեան խորհուրդին մօտ:

Լիբանանի ներկայացուցիչը բողոքը պիտի վերաբերի Կազախի դէմ պատերազմի սկիզբէն ի վեր Պեքան միջազգային օդակայանին դէմ իսրայելի կողմէ արձանագրուած ուսնագրութիւններուն, որոնք կը գործուին լիբանանեան քաղաքացիական օդանավակայաններուն վնասներով:

ՊՈՒ ԶԱՊԻՒ ԸՆԴՈՒՆԵՑ ՅՈՒՆԱՍՏԱՆԻ, ՅՈՒՆԱՍՏԻ ԵՒ ԻՏԱԼԻՅՈՑ ԴԵՄՊՏԱՆՆԵՐԸ

Միւս կողմէ, արտաքին գործոց եւ արտերկրի լիբանանցիներու հարցերու նախարարի պաշտօնակատար Ապտալա Պու Ֆալպ ընդունեց Լիբանանի մէջ Յունաստանի դեսպան Տեսփինա Քուրուփուրուն, որմէ ստացաւ հրաւեր մը Յունաստան այցելութեան՝ ապրիլ ամսուան ընթացքին:

Յունաստանի այցելեց նաեւ Լիբանանի մէջ Ֆրանսայի դեսպան Էրվէ Մակրո, որուն հետ ընտանեակը հարաւային Լիբանանի իրադարձութիւններն ու երկկողմանի յարաբերութիւնները:

Պու Ֆալպի այցելեց նաեւ Լիբանանի մէջ Իտալիոյ դեսպան Նիքոլոօ Պոնտիօ: Քննարկութեան երկկողմանի յարաբերութիւնները:

ՄԱՀԱՉԳ

Տոքո. Ռազմիկ Ճիւպաշեան ԲԺ: Ռուբեն Ճիւպաշեան եւ ԲԺ: Առիւն ՄիլաթիւՍ Տիար Վատ Ռոսի եւ տոքո. Սեւան Ճիւպաշեան Ակոշեան եւ Ճիւպաշեան ընտանիքներ Շալկէան եւ Իսա ընտանիքներ ՄիլաթիւՍ, Ռոսի եւ Թերզեան ընտանիքներ Տիար Եւ Ֆունճեան ընտանիքներ եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց կնոջ, մօր եւ հարազատին՝

ՀԻԼՏԱ ԱԿՈՇԵԱՆ - ՃԻՆՊԱՇԵԱՆԻ (Ճնճալ՝ Պիլիոս, 1964-ին)

մահը, որ պատահեցաւ հինգշաբթի, 21 մարտ 2024-ին:

Յուղարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի չորեքշաբթի, 27 մարտին, կէսօրէ առաջ ժամը 11:00-ին, Մոսկուայի (Քանադա) Ս. Յակոբ առաջնորդանիստ եկեղեցւոյ մէջ:

- Ներկայ ընդունիլ իբրեւ մահազո:
- Յանգուցեալի հոգոյն հոգեհանգիստ պիտի կատարուի չորեքշաբթի, 27 մարտ 2024-ին, կէսօրէ ետք ժամը 5:00-ին, Ճիւնիկ Ս. Յարութիւն եկեղեցւոյ մէջ:
- Յաւակցութիւնները կ'ընդունուին նոյն օրը, եկեղեցւոյ սրահին մէջ, ժամը 3:00-էն 7:00:

ԼԻՔԱՆԱՆԻ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՊԵՏԵՐՆ ՌԻ ԱՆՁՆԱՌՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՑԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ ԿՐ ՅԱՅՏՆԵՆ ՓՈՒԹԻՆԻՆ

Մոսկուայի մէջ արձանագրուած ահաբեկչական գործողութեան լոյսին տակ Լիբանանի իշխանութեան պետերն ու անձնաւորութիւնները ցաւակցութիւն յայտնեցին Ռուսիոյ նախագահ Վլատիմիր Փութինին: Խորհրդարանի նախագահ Նեպի Պրորի ցաւակցական հեռագիր մը յղեց Փութինին:

Ան ցաւակցութիւն յայտնեց ահաբեկչական գործողութեան պատճառով զոհերուն համար, շուտափոյթ ապաքինում մաղթեց վիրաւորներուն եւ զօրակցութիւն յայտնեց Ռուսիոյ:

Պրորի խստիւ դատապարտեց քաղաքացիներուն դէմ գործուած ահաբեկչութիւնը՝ ընդգծելով, որ Մոսկուայի մէջ պատահած այս յարձակումը ցոյց կու տայ, որ ահաբեկչութիւնը կրօն չի ճանչնար ու ինքնուրուի չունի եւ կը միտի խախտել տարբեր երկիրներու ապահովական անդորրը:

Պրորի ցաւակցագիր մը յղեց նաեւ Ռուսիոյ Տումա-յի նախագահ Վլատիմիր Վլատիմիր:

Վարչապետի պաշտօնակատար Նեժիպ Միքաթի ցաւակցագիր մը յղեց Փութինին՝ շեշտելով, որ Լիբանան կը դատապարտէ Մոսկուայի հարուածած ահաբեկչական գործողութիւնը եւ կը մերժէ ամէն տեսակի վայրագութիւն ու ծայրայեղութիւն: Ան ցաւակցութիւն յայտնեց զոհերու հարազատներուն եւ ապաքինում մաղթեց վիրաւորներուն:

Յանգուցեալներուն նախկին նախագահ զօր. Էմիլ Լահուտ հրապարակեց հաղորդագրութիւն մը եւ դատապարտեց Ռուսիոյ դէմ գործուած ահաբեկչական գործողութիւնը:

Ան հարց տուաւ, թէ ինչու կարգ մը կազմակերպութիւններ աշխարհի չորս կողմերը ահաբեկչական գործողութիւններ կը կատարեն, բացի թշնամի իսրայելէն:

Նախկին վարչապետ Ֆուատ Միկիտա ցաւակցագիր մը յղեց Փութինին՝ խստիւ դատապարտելով Մոսկուայի հարուածած ահաբեկչութիւնը:

Ընկերվար յառաջդիմական կուսակցութեան նախկին ղեկավար Ռալփ Ժոնսոն ցաւակցական հեռագիրներ յղեց Փութինին, արտաքին գործոց նախարար Մերկէ Լարուփին եւ արտաքին գործոց փոխնախարար Միխայիլ Դոկտամովին: Ան դատապարտեց ահաբեկչական այս գործողութիւնը՝ հաստատելով, որ անոր նպատակն է հարուածել Ռուսիոյ ներքին ապահովական անդորրը: Ժոնսոն շեշտեց, որ ահաբեկչութիւնը ո'չ սահման եւ ո'չ ալ արգելք ունի:

Նախկին նախարար Ռատիկ Խազըն շեշտեց ցաւակցութիւն յայտնեց իր քարոզական ժողովուրդին եւ Ռուսիոյ նախագահ Վլատիմիր Փութինին՝ դատապարտելով Մոսկուայի ցնցած ահաբեկչական գործողութիւնը:

Ազգային ազատ հոսանք կուսակցութիւնը դատապարտեց Մոսկուայի դէմ գործուած ահաբեկչութիւնը, որուն պատճառով արձանագրուեցան տասնեակ զոհեր ու վիրաւորներ:

«Ահաբեկչութիւնը կը մտայ երկուստ քայլ մը, որ պիտի չկարենայ իրականացնել զայն հովանաւորողներուն նպատակները: Կը մաղթենք, որ Ռուսիան մնայ կայուն եւ ապահով», կը նշէ Ազգային ազատ հոսանք կուսակցութեան իրապարակած հաղորդագրութիւնը:

Լիբանանեան ուժեր կուսակցութեան ղեկավար Սամիր Ժախաճի դատապարտեց Ռուսիան հարուածած ահաբեկչութիւնը՝ ընդգծելով, որ այդ գործողութիւնը կ'ենթադրէ, որ համաշխարհային զօրակցութիւն ցուցաբերուի՝ զայն արմատախիլ ընելու աշխարհի երեսին:

ՍԻԻՍ կողմէ, յայտնեց, որ Ռուսիոյ մէջ Լիբանանի դեսպան Շաուրի Պու Նասար հաստատեց, որ Ռուսիան հարուածած ահաբեկչական գործողութեան ընթացքին Ռուսիոյ լիբանանեան զաղութեան ոչ ոք վիրաւորուած է:

«ԱՊԱԳԱՅ ԼՐԱԳՐՈՂՆԵՐ»-ՈՒ ԾՐԱԳԻՐԻ ԶՈՐՐՈՐԴ ՓՈՒԼ ԹԷ ԻՆՉՊԷՄ ԿԱՐԵԼԻ Է ԹՈՒԱՅՆԱՅՆԵԼ ՈՐԵԻԷ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ



Նախածեռնութեամբ «Ազգակ»-ին եւ աշակցութեամբ Գալուստ Կիւպէնկեան հիմնարկութեան հայկական բաժանմունքին, «Ապագայ լրագրողներ»-ու ծրագրի չորրորդ փուլի մասնակիցները ծախօթացան որեւէ հրատարակութիւն թուայնացնելու նպատակներուն, ձեւերուն, միջոցներուն եւ օգտագործման ձեւերուն:

Որպէս, 22 մարտ 2024-ին, «Ազգակ»-ի «Փիւնիկ» սրահին մէջ տեղի ունեցաւ «Ապագայ լրագրողներ»-ու չորրորդ խումբին հանդիպումը, որուն ընթացքին «Ազգակ»-ի արխիւներու եւ զանոնք թուայնացնելու պատասխանատու Թալին Գալաթեան բացատրեց արխիւները թուայնացնելու նպատակներուն, ինչպէս նաեւ ձեւերուն եւ միջոցներուն մասին:

Շաբ.ը՝ էջ 7

ԼԻՔԱՆԱՆԵԱՆ ԿԱՐԳ ԼՈՒՐԵՐ

- ՍԵԻ շուկային մէջ ամերիկեան տոլարին փոխարժեքը 89.700 Լ. ոսկի է, իսկ «Սայրաֆա»-ի էլեկտրոնային հարթակը՝ 89.500 Լ. ոսկի:
- ՄԱՐՈՒԻ համայնքի

ԱՒԱԳ ԾԱՐԱԹԸ ԱՆԹԻԼԻԱՄԻ ՄԱՅՐԱՎԱՆՔԻՆ ՄԷՉ (ԺԱՄԱՆԿԱՅՈՅՑ)

ԱՒԱԳ ԵՐԵՎԱՆԻ, 26 ՄԱՐՏ 2024	ժամը 17:00-ին
- Յիշատակ Տասն Կուսանաց՝	ժամը 17:00-ին
ԱՒԱԳ ԳՆԱԳՆԱՐԻ, 28 ՄԱՐՏ 2024	ժամը 8:00-ին
- Կարգ ապաշխարողաց՝	ժամը 8:00-ին
- Ս. Հաղորդութեան պատարագ՝	ժամը 9:30-ին
- Կարգ ոտնլուայի՝	ժամը 16:00-ին
- Կարգ չարչարանաց (Խաւարման գիշեր)՝	ժամը 19:30-ին
ԱՒԱԳ ՈՒՐԱԹԸ, 29 ՄԱՐՏ 2024	ժամը 8:30-ին
- Կարգ խաչելութեան՝	ժամը 8:30-ին
- Կարգ թաղման՝	ժամը 16:00-ին
ԱՒԱԳ ԾԱՐԱԹԸ, 30 ՄԱՐՏ 2024	ժամը 8:00-ին
- Առաւօտեան ժամերգութիւն՝	ժամը 8:00-ին
- Ծրագլուայի ժամերգութիւն՝	ժամը 16:00-ին
- Ծրագլուայի Ս. պատարագ՝	ժամը 17:00-ին
ԿԻՐԱԿԻ, 31 ՄԱՐՏ 2024 (Ս. ՉԱՏԻԿ - Ս. ՅԱՐՈՒԹԻՒՆ)	ժամը 8:00-ին
- Առաւօտեան ժամերգութիւն՝	ժամը 8:00-ին
- Ս. եւ անմահ հայրապետական պատարագ՝	ժամը 10:00-ին
- Հայրապետական պատարագ՝	ժամը 11:00-ին
ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 1 ԱՊՐԻԼ 2024 (ՅՈՒՆԱԿ ՄԵՆԵԼՈՅ)	ժամը 8:30-ին
- Առաւօտեան ժամերգութիւն՝	ժամը 8:30-ին
- Մենելոցի Ս. պատարագ՝	ժամը 10:00-ին

Պարա Ռայի պատարագը Ծաղկագործի առիթով նախագահած իր Ս. պատարագին ընթացքին աղօթեց ամ Աստուած փրկութիւն եւ յաղթանակ պարգեւելու լիբանանցիներուն՝ շեշտելով, որ Լիբանանի մէջ քաղաքական մեղքերը վերածուած են համատարած փոստերէ:

ՅՈՅՆ ուղղափառ համայնքի Պեքանի առաջնորդ Էլիաս Աւուր Եպիսկոպոսը կիրակի օրուն իր քարոզի մէջ հաստատեց, որ սահմանադրական իշխանութիւններն ու պետական հաստատութիւնները վերստին հիմնելու Լիբանանի փրկութեան գործողութեան համար անհրաժեշտ նախաքայլեր են:

ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱՎԱՆ հանդիպում պլոքի երեսփոխան Թելմուր ժամպաթ կըզ ուղղեց ազգային միասնակա-

ՄԱՀԱՉԳ

Տիգրանակերտի հայրենակցական միութեան վարչութիւնը կը գուժէ իր հիմնադիրներէ եւ երկարամեայ վաստակաշատ անդամներէ

ԲԱՐԳԷՆ ԹԻՔԻՃԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ հինգշաբթի, 7 մարտ 2024-ին:

ՄԱՀԱՉԳ

Տիգրանակերտի հայրենակցական միութեան վարչութիւնը կը գուժէ իր հիմնադիրներէ եւ երկարամեայ վաստակաշատ անդամներէ

Տիգրանակերտի հայրենակցական միութեան վարչութիւնը կը գուժէ իր հիմնադիրներէ եւ երկարամեայ վաստակաշատ անդամներէ

ԲԱՐԳԷՆ ԹԻՔԻՃԵԱՆԻ (ԳՐԱՏՈՒՆ ԾԻՐԱԶ) (Ճնճալ՝ Գամբըլի, 1943-ին)

մահը, որ պատահեցաւ հինգշաբթի, 7 մարտ 2024-ին, Միացեալ Նահանգներու մէջ:

Յուղարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի չորեքշաբթի, 27 մարտին, կէսօրէ առաջ ժամը 11:00-ին, Նորաշէնի Սրբոց Վարդանանց եկեղեցւոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Պուրճ Յամունի Ազգային գերեզմանատունը:

- Ներկայ ընդունիլ իբրեւ մահազո:
- Յաւակցութիւնները կ'ընդունուին յետ թաղման արարողութեան, «Ազգակ»-ի «Փիւնիկ» սրահին մէջ, միջոց երեկոյեան ժամը 7:30:
- ԾԱՒՕԹ - Փոխան ծաղկեպակի՝ նուիրատուութիւնները կատարել «Ազգակ»-ի ֆոնտին:

ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ ՍՐՔՈՑ ԿԱՐԱՆԱՆՑ ԵԿԵՐԵՑՈՑ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԵՒ ՀԱՅԿԱԶԵԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻՆ ՄԻՋԵԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻ

«ՀԱՅԵՐԷՆԻ ՈՒՍՈՒՑԻՉ ՊԱՏՐԱՍՏԵԼԸ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹԻՒՆ Է»

ՇԵՇՏԵՑԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՂՆԵՐԸ



Կազմակերպությունը Հայկազեան համալսարանի տնօրենությունն է...



տրամադրումը այն ուսանողներուն, որոնք փափաքը ունին հայերէնի ուսուցիչ դառնալու...

Շար.՝ էջ 6

ԱԶԳԱՅԻՆ ԵՂԻՇԷ ՄԱՆՈՒԿԵԱՆ ՔՈՒՆԵՃ

ԳԱՐՆԱՆԱՄՈՒՑԻ ՆԱԽԱՃԱՇ

Կազմակերպությունը Ազգ. Ե. Մա- նուկեան ջուլեճի տիկնանց յանձնա- խումբին...

Անի Բագրատունի, որ, իր կարգին, բա- րի գալուստ մարդեց մեծաթիւ ներկա- ներուն...



Ձեռնարկին բացման խօսքը կատա- րեց տիկնանց յանձնախումբէն Աննա ՃԵՎԱԿԻՐԾԵԱՆԸ...

նուեցան տիկնանց յանձնախումբին կազմակերպած նախաճաշին: Բագ- րատունի շնորհակալութիւն յայտնեց տիկիններ Միրնա Կապուկեանին...

Շար.՝ էջ 6

ՍԵՂՄՈՒՈՂ ԹԱԿԱՐԳՆԵՐ

Թուրք-ազերիական նախագծումով ու պարտադ- րանքով, եւ Հայաստանի իշխանաւորներուն գործա- կատարութեամբ, Հայաստանի սահմանները պտիկ- պտիկ կը նեղանան, իրաքանչիւր մանր քայլափոխի բանալէճը կը ստանայ թշնամիին հաշիւներուն հա- մապատասխանող ընթացք, պատրաստուած թա- կարդին մէջ կ'իյնան բոլորը, ներառեալ՝ ընդդիմա- դիրները, սահմանագետները, պատմագետներն ու աշխարհագրագետները:



Կական են Արցախն ու Նախիջեանը, Արեւմտեան Հայաստանն ու Կիլիկիան: Կը փորձեն, կրկնեց, մեր իրաւատը եւ արդարատեւէ ժողովուրդին կոկորդին ի վար իրել թշնամիին համաթուրանական ծրագիրնե- րուն պատահիկները եւ իւրաքանչիւր պատահիկ կը իրամցնեն «Նախորդ կորուստող մոռցի՞ր»-ի տրամա- բանութեամբ:

Պահ մը հեռանալու արտօնութենէն ու իրական աշխարհագրութենէն եւ տեսնելը, թէ թակարդին նո- րագոյն «հատորը» ինչպէ՛ս կ'ընկալուի:

Փաշինեանի եւ խմբակիցներուն ձեռքը տուած են քարտեսներ եւ սահմանային գծակարներ (որոնք կը ստեղծեն հազար ու մէկ հիմնաւորեալ մտավախու- թիւն), որոնք առանց այլեւայլի՝ ազերիական շահե- րուն եւ անարդար պահանջներուն իրականացումը կը հետապնդեն, ու Երեւանի գործակատարները դարձած են այդ բոլորին սուտ վկաները: «Այս քանի մը զիւղերը Ազրպեյճանի պատկանած են այսինչ- այնինչ քարտեսով», կը փորձէ համոզել կառավարու- թեան (ան)գլուխը, ինչպէս որ անի քան տարի մը առաջ վճռեց, որ ամբողջ Արցախը միշտ ալ Ազրպեյ- ճանի պատկանած է (երբեմն նագ-տուգ ալ կ'ընէ, թէ «Նախկիններն էին ստուգող»): Եւ ահա բանալէճը (այսինքն՝ լարուած թակարդը) կը սկսի բանիլ: Հարց կը ծագի, թէ «սահմանագիծ»-ը ո՞ր զիւղի ջուլը կ'անցնի, ո՞ր տարածքները պէտք է ընդունիլ իբրեւ ազերիապատկան, ո՞րը՝ հայկական: Կը տեսնե՞ս, որ այս հարցը մենաշնորհն է հայկական քաղաքա- կան բեմին, Ազրպեյճան իսկապէ՛ս որ չէ մտահոգ- ւած նման «մակրոքնքով», այլ կը հետապնդէ ամ- բողջ Հայաստանը կոլ տալու վաղեմի ծրագիրը, իսկ իր գործակատարները որդեգրած են ժողովուրդը «մասնավճարներով» համոզելու մարտավարութի- նը, որովհետեւ Ազրպեյճանի բոլոր ուզածները միա- նուագ յանձնելը շատ անելի բացայայտ պիտի դարձ- նէ մեծ դաւն ու դաւակիցները:



Բնականաբար հարց կը ծագի. ընդդիմադիրներն ու իսկական բանագետները, հայրենիքին տիրութիւն ընել վճռողները ո՞նչ կրնան ընել՝ բացի... ինչպէ՛ս իրե- րայաջող թակարդներուն մէջ:

Պատասխանը յստակ է շատո՞նց: Օրակարգի, իս- կական ու իրատես օրակարգի վերածել մեր իրա- ւունքներուն ամբողջական թողածորդ, անոր շուրջ համախմբել որչ ազգը, գայն պարտարել իշխանաւո- րին՝ սկսելով անոր հեռացումէն եւ իշխանափոխութե- նէն, հասնելու համար այն բեմերը, ուր մեր իրաւունք- ներուն ճանաչումը կերտած է երկար պատմութիւն, ամրագրուած է փաստաթուղթերով եւ միջազգային որոշումներով: Սա կրկին ու կրկին հնչող մարտա- իրաւեր է Հայաստանի եւ սփիւռքի հայրութեան:

Ս. ՄԱՅՍԵՐԵՃԵԱՆ

Շար.՝ էջ 6

ԱԼԻԵՒԻ ՆԱԽԱՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՆ ՄԱՍԻՆ

Ազրպեյճանի նախագահ Իլհամ Ալիեւ շատ լայն բացաւ Հայաստանէն պահանջներուն կարկինը եւ դարձեալ սպառնական ոճով խօսեցաւ՝ խաղաղու- թեան պայմանագրին վերաբերող իր պայմանները վերստին շեշտելով:



Մամայնագրին ամնչուած միջազգային երաշխաւո- րութեան մը, որ ազրպեյճանական կողմը կտրակա- նապէս կը մերժէ: Ալիեւ վերահաստատեց, որ Պաքուի համար անընդունելի է միջազգային երաշխաւորու- թիւներուն միջոցով խաղաղութեան համաձայնագրի մը ստորագրումը, միևնույն ժամանակ իշխանութիւն- ները կը պնդեն, որ Հայաստանի եւ Ազրպեյճանի մի- ջեւ խաղաղութեան պայմանագրի կցման ամբողջ հուլովոյնը պէտք է ամրագրուի միջազգային երաշ- խաւորներուն կողմէ: Հոս պէտք է նշել Միացեալ Նա- հանգներուն եւ Եւրոպական Միութեան նկատմամբ Երեւանի իշխանութիւններուն խոր վստահութիւնը, որուն դիմաց Ազրպեյճան ներկայիս ամբողջութեամբ կը յենի Ռուսիոյ եւ կը մերժէ ամերիկեան- եւրոպա- կան ճակատի միջնորդական ճիգերն ու երաշխիք- ները: Ալիեւի. Պաքու Եւրոպական Միութեան առանցքային ուժերուն Ֆրանսան կը մեղադրէ Հարաւ- ային Կովկասը ապակայունացնելու եւ Հայաստանը գինելու մեղադրանքներով: Ալիեւ այս հարցին կա- պուած ռազմաշունչ յայտարարութիւն մըն ալ կա- տարելով՝ շեշտեց, որ խաղաղութեան համաձայնա- գիրը կամ Ազրպեյճանի պայմաններով կը ստորա- գրուի, կամ՝ չի ստորագրուիր:

Ալիեւի պահանջներուն գլխաւորը կը վերաբերի, այսպէս կոչուած, «Հանգզուրի միջանցք»-ին՝ Նոյեմբ- ր 9-ի եռակողմ յայտարարութեան իսկողութիւնը կը- տին մէջ տեղ գտած «անխոչընդոտ տեղաշարժի ապահովում Ազրպեյճանի եւ Նախիջեանի միջեւ» ձեւակերպումը վերաշեշտեց, թէ հայկական կողմը պարտաւոր է նման միջանցք տրամադրելու Օրսու- պատի եւ Հանգզուրի միջեւ: Միջանցքէն անցնող բո- լոր ինքնաշարժները եւ բեռնատարները, ըստ Ազր- պեյճանի նախագահին, պէտք չէ գննուին հայկական մաքսային պաշտօնէսներուն կողմէ, իսկ միջանցքին հսկողութիւնը պէտք է վստահուի ռուսական ուժե- րուն: Հայկական կողմը նման բան բացառած է եւ կը պնդէ, որ Հայաստանի ու Ազրպեյճանի միջեւ հաղոր- դակցութիւններու վերաբացման ընդհանուր տրա- մաբանութեան մէջ միջանցքի հասկացողութեան վե- րաբերեալ ոչ մէկ կէտ գոյութիւն ունի, եւ թէ՛ Նախի- ջեանի եւ Ազրպեյճանի միջեւ ցամաքային կապին հսկողութիւնը պէտք է մաքսային վարչարարական գործ- ուղիները պիտի կտարուին հայկական համա- պատասխան կառոյցներուն կողմէ, որոնք ռուսական ուժերուն հետ փոխանակումը բացառուած է: Միևն- րդեւ Ալիեւ անբարար կը համարէ հայկական երաշխիքները եւ կը պնդէ, որ նման միջանցքի ստեղծման պարագային, հսկողութիւնը պէտք է կա- տարեն ռուսական ուժերը, որոնց այս պարտակա- նութիւնը ամրագրուած է Նոյեմբեր 9-ի եռակողմ յայ- տարարութեամբ:

Սակայն հարցը կը վերաբերի Նոյնինքն եռակողմ յայտարարութեան վաւերականութեան՝ նկատի ու- նենալով, որ Նոյն այդ յայտարարութեամբ ամրա- գրուած Հաշինի միջանցքը ալ գոյութիւն չունի, իսկ արցախահայութեան ապահովութեան երաշխաւոր- ման կապուած՝ ռուսական ուժերուն գործունէութիւ- նը ոչ էս եւ, որովհետեւ արցախահայութիւնը բռնա- գաղթեցաւ իր հայրենի բնօրրանէն: Ուրեմն տրա- մաբանութիւնը այն է, որ Նոյն յայտարարութեան մէկ կէտէն շեղմամբ, կարելի չէ այլ կէտի մը վրայ շեշտել եւ անոր գործարարութիւնը պահանջել, որովհետեւ ինչ Նոյեմբերի եռակողմ յայտարարութեան բոլոր կէ- տերուն գործարարութեամբ է, որ յայտարարութիւնը կը պահէ իր վաւերականութիւնը:

Երեւանի եւ Պաքուի միջեւ տարակարծութիւննե- րու երկրորդ կէտը կը վերաբերի խաղաղութեան հա-

Ա. Ա.

Շար.՝ էջ 6

«ՀՄԸՄ-ի 13-րդ ՊԱՏՊԱՄԱՐՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՐ ԱՆՊԱՄ ՄԸ ԵՒ ՈՒԽՏԵՑ, ԱՅՍ ՊԱՐԱԳԱՅԻՆ ԱՐՑԱԽԻ ՀԱՄԱՐ, ՈՐ ՀՄԸՄ-ԱԿԱՆՆԵՐ ԱՐՑԱԽԻ ԴԲՕՇԸ, ՊԵՃԵՐԸ ԿՐԵԼՈՎ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ՊԻՏԻ ՅԻՇԵՑՆԵՆ, ԹԷ՛ ԱԶԱՏ, ԱՆԿԱԽ ԵՒ ԱՄԲՈՂՁԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԱԶ ՄԸ ԿԱՅ, ՈՐ ՊԵ՛ՏՔ Ե ԻՐԱԿԱՆԱՆԱՅ»

«ԱԶԴԱԿ»-ԻՆ ՀԱՍՏԱՏԵՑ ՅԱԿՈՒ ԽԱՉԵՐԵԱՆ

2-7 հոկտեմբեր 2023-ին հայ ժողովուրդի արդի պատմության ամեն էին փոքրիկայի, տագնապալի, ճակատագրական օրերուն Յայ մարմնակրթական ընդհանուր միութիւնը գումարեց Պատգամաւորական 13-րդ ընդհանուր ժողովը, որուն ընթացքին կարեւորութեամբ քննեց Արցախը ՅՄԸՄ-ի աշխատանքներուն մէջ մասնաւոր ներկայութիւն դարձնելու հրամայականը եւ որոշեց պահպանել Արցախի Յանրապետութեան խորհրդանիշները, հաստատել «ՅՄԸՄ-Արցախ հիմնադրամ»-ը, մշակել Արցախէ բռնի տեղահանութեան փոքրիկներու համար ծրագիրներ եւ այլ կարեւոր առաջադրանքներ:

Պատգամաւորական ընդհանուր ժողովին եւ ՅՄԸՄ-ի 13-րդ ընդհանուր ժողովին վարչութեան քառամեայ ծրագիրներուն մանրամասնութիւններուն տեղեկանալու միտումով «Ազգակ» հետեւեալ հարցազոյցը կատարեց ՅՄԸՄ-ի 13-րդ ընդհանուր ժողովին վարչութեան ատենակազմի ծախմարմնի հետ:

«ԱԶԴԱԿ».- 2-7 հոկտեմբերին Յայաստանի մէջ կայացաւ ՅՄԸՄ-ի Պատգամաւորական 13-րդ ընդհանուր ժողովը, որուն ընթացքին, իր ընկալելալ օրակարգերու ընկալումներէ, շատ կարեւոր եւ դաստիարակիչ որոշումներ ընդունուեցան:

Նախ խօսքին Պատգամաւորական 13-րդ ընդհանուր ժողովին մասին, որ տեղի ունեցաւ հայ ժողովուրդին համար վերջին դարաշրջանին ամեն էին դժոխակ օրերու ընթացքին: Ի՞նչ հարցեր քննարկուեցան: Մասնաւորապէս կերպով անդրադառնալով մասնաւոր յառաջիկայ քառամեայ ծրագիրներուն՝ ըլլան անոնք սկստուական թէ բարգաւաճ:

ՅԱԿՈՒ ԽԱՉԵՐԵԱՆ.- ՅՄԸՄ-ի Պատգամաւորական 13-րդ ընդհանուր ժողովին թուականը զուգահեռաբար հայ ժողովուրդին համար ճակատագրական ժամանակաշրջանի մը: Մեկ ժողով առաջ մեք Արցախ մեկուսի շրջանի հիմնադրութենէն անմիջապէս ետք կը տօնախմբէիք ազատ Արցախի մեկուսի շրջանի ներկայացուցիչներու առաջին մասնակցութեամբ ՅՄԸՄ-ի գերագոյն ժողովին, իսկ չորս տարի ետք ահաւասիկ Արցախի ներկայացուցիչը Ընդհանուր ժողովին պիտի մասնակցեն, երբ արդէն Արցախը յանձնուած էր թշնամիին: Պահը ճնշչ էր, լրջախոհութիւն պարտադրող: Այսպիսի մթնոլորտի մէջ կայացաւ ժողովը, իսկ անոր որոշումներն ալ որոշ չափով յատկանշուեցան պահանքս պարտաւորեցնող լրջութեամբ եւ պատասխանատուութեամբ:

Բնական է, որ ՅՄԸՄ-ի պատգամաւորական ժողովները կը ընկնէն ընթացաւարտ Կեդրոնական վարչութեան քառամեայ գործունեութիւնը, կը կատարեն մատնանշումներ ու քննարկումներ, կը մշակեն ծրագիրներ եւ կ'որոշեն որոշումներ:

Ժողովին մասնակցութեան առումով յատկանշական էին երկու իրողութիւն. առաջին՝ որ մասնակցներուն 60 առ հարիւրը առաջին անգամ էր, որ կը մասնակցէր Պատգամաւորական ընդհանուր ժողովին, իսկ երկրորդը՝ անոնց կեսէն անէին 25-35 տարիքի միջեւ երիտասարդներ էին: Զետեալ Պատգամաւորական ժողովը ՅՄԸՄ-ի իսկական պատկերը կը ներկայացնէր՝ իբրեւ սփիւռքի ամեն էին երիտասարդ եւ աշխուժ միութիւնը: Զոն էր երիտասարդութիւնը, հոն էին նոր գաղափարները եւ նոր միտքերը՝ լիքեւորելու համար յառաջիկայի աշխատանքները եւ ուրուագծելու նպատակային նոր հորիզոններ: Այս իրագործումը կատարեց Պատգամաւորական ժողովը եւ այդ պատճառով կ'եթեալդեմ, որ յաջող էր:

Արցախի օրակարգին առջնութեւն, Ընդհանուր ժողովին եւ նորընտիր Կեդրոնական վարչութեան անդրախիկ նիստով եզրակացուած որոշումներէն կ'ուզեմ յիշել հետեւեալները:-

1.- ՅՄԸՄ-ի համագաղութային միութիւն ըլլալու հանգամանքը անելի էս էացնելու նպատակով, համագաղութային ձեռնարկներու կողքին, մասնաւոր ժամանակացոյցով կազմակերպել ցամաքամասային բանակումներ, մարզախաղեր, դիւանական ժողովներ եւ սկստուական խմբակայական համագումարներ:

2.- Կերոյիշեալ առաջադրութեամբ, կազմակերպական հզօրացման եւ զարգացման մէջ միութեան պատկանելիութեան նպատակով մարմիններու կամ գործող միաւորներու ներկայի կիրարկուած ուղղահանց յարաբերական գործելաձեւի կողքին, հաստատել հորիզոնական յարաբերական ցանցեր:

3.- Միութեան սկստուական եւ մարզական ճիւղերու կողքին հաստատել կազմակերպ երիտասարդական ճիւղ:

4.- ՅՄԸՄ-ի մարդուսի կիսկ կարելիութիւններու համագործօգտագործումը՝ ազգային, միութեանական եւ տնտեսական մարզերու մէջ:

«Ա.».- Արցախն էր կիզակետը ՅՄԸՄ-ի Պատգամաւորական 13-րդ ժողովին, որուն ընթացքին քննարկուեցան Արցախի վերաբերող հարցեր:

ՅՄԸՄ-ի Արցախի մասնաճիւղը Յայաստանի մէջ պիտի շարունակէ՝ իր գործունեութիւնը, թէ՛ պիտի միաձուլուի՝ ըստ արցախցիներու Յայաստանի մէջ բնակութեան վայրերուն, ՅԱՍԿ-ի հետ:

Յ. Խ.- Նախ այս հարցազոյցի ճամբով հաստատեմ, որ ՅՄԸՄ-ը եղաւ հայ իրականութեան մէջ գոյութիւն ունեցող եւ միութեաններուն, կառոյցներուն կամ գործող ուժերու առաջիկը, որ որոշեց կանգուն պահել Արցախի իր միաւորը:

ՅԱԿՈՒ ԽԱՉԵՐԵԱՆ.- Արցախի մեկուսի միաւորը պիտի մնայ կանգուն եւ պիտի գործէ անկախ, հետեւաբար միաձուլումի հարց չկայ:

Կայ գործունեութեան վայրի-կերոյի հարց, սկստի ունեւանով, որ Արցախը գրաւուած է Ազրպէյճանի կողմէ: Այնքան առեւ որ այդպէս է իրավիճակը, Արցախի մեկուսի միաւորը պիտի գործէ մնայով վտարանոյի, յար եւ նման ասել հարիւր տարի առաջուան մեր միաւորներու պարագային, երբ ՅՄԸՄ-ը դարձեալ վտարանոյի եղաւ Առաջին Յանրապետութեան սահմաններէն եւ



Արցախի վերաբերող որոշումներու ընթացքին կայտնու

գործեց սփիւռքի մէջ՝ միշտ նպատակ ունեւանով օր մը վերադառնալ ազատ հայրենիք: Այսօր տարբեր չէ պարագան: Եւ որոշումը այդ կ'ընէ՝ կանգուն պիտի մնայ մինչեւ ազատ Արցախ վերադարձ: ՅՄԸՄ-ի Արցախի մասնաճիւղը թիւով 111-րդ մասնաճիւղն է եւ պիտի մնայ այդպէս, մեք պիտի պահենք այդ թիւը՝ իբրեւ իւրայատուկ մասնաճիւղ, իւրայատուկ թիւ:

Մինչ այդ մեկուսի շրջանի անդամներ, որոնք ստիպողաբար կը գտնուին Յայաստան, իրենց աշխատանքները տանելու



Համա-ՅՄԸՄ-ական 11-րդ մարզախաղերու մասնակցները

առումով, պիտի շարունակեն գործել Արցախի մեկուսի վարչութեան հովանաւորութեամբ, օժանդակութեամբ Յայաստանի մեր միութեան տեղաբնակ մասնակցներուն եւ ՅԱՍԿ-ի Կեդրոնական վարչութեան նեցուկով. մեկուսի վարչութիւնը պիտի գործէ անկախ: Վարչութիւնը ունի իր գրասենեակը ՅԱՍԿ-ի աշխատանքի տարածքին ներքեւ, գործափարութիւնը կը զբաղի Արցախի մասնաճիւղի անդամներով, որոնք կը գտնուին Յայաստանի տարբեր շրջաններու մէջ, մեծամասնութեամբ՝ Երեւան:

«Ա.».- Պատգամաւորական 13-րդ ժողովին հիմնադրուեցաւ «ՅՄԸՄ-Արցախ հիմնադրամը»: Ի՞նչ նպատակ կը հետապնդէ



Արցախի տարազաւորները Արցախի մէջ

անկախ եւ ինչպէ՛ս պիտի ընթանայ անոր կենդանացումն ու յարատեւումը:

Յ. Խ.- Պատգամը յստակ է՝ եւ՛ ներքին, եւ՛ արտաքին առումով: Ներքին առումով՝ Արցախի մեկուսի միաւորը կանգուն պիտի մնայ: «ՅՄԸՄ-Արցախ հիմնադրամը» հաստատել ուղղելիչ է ՅՄԸՄ-ի բոլոր շարքերուն եւ իր արձագանգը պետք է ունենայ իւրաքանչիւր մասնաճիւղի, իւրաքանչիւր ՅՄԸՄ-ականի տարած աշխատանքին մէջ: Կանգուն պահել է **ԱՐՏԱԽԸ** ամեն իմաստով՝ թէ՛ իբրեւ միտք, թէ՛ իբրեւ ոգի, անեական գոյութիւն, մինչեւ վերադարձ ազատ Արցախ:



Երդման արարողութիւն Արցախի մէջ

Իսկ արտաքին առումով՝ կոչ է մեզի համակիր շրջանակին, որ երբեիցէ մեզ չէ լքած եւ միշտ մնացած մեր կողքին: Յայոց պատմութեան վերջին դարաշրջանի ամեն էին դժուար ժամանակաշրջանին, երբ ՅՄԸՄ՝ իր առաքելութեան հաւատարիմ, որոշած է իր շարքերը լարել եւ կեդրոնացնել նպատակային ծրագիրներու իրականացման, կը սպասենք ՅՄԸՄ-ի համակիր շրջանակէն շարունակէ սատար հանդիսանալ մեր կամաւոր բանակին մինչեւ մեր անկատար տնչւերու իրականացում:

«ՅՄԸՄ-Արցախ հիմնադրամ»-ի յառաջացումը, որ եապէս նիւթական օժանդակութիւն տրամադրելու աշխատանքն է ՅՄԸՄ-ի ճամբով Արցախի մեր արիւնակիցներուն, խորքին մէջ նիւթական անդին ունի բարոյական արժեք: ՅՄԸՄ-ի շարքերուն մէջ նոր ոգին, նոր մօտեցումի ստեղծումն է, որ պիտի արտագոյալ ՅՄԸՄ-ի տարբեր աշխատանքներուն մէջ յառաջիկայ քառամեակին եւ թերեւս անելի տեք: Կոչ է անելի ամուր ըլլալու, անելի պինդ մնալու, որպէսզի այսօրուան մեր կորսնցուցածները՝ ամեն մակարդակի, ոչ միայն Արցախի մակարդակի, Արցախի մասնաճիւղի մակարդակի, այլ ազգային առումով՝ հողի, ազգային արժեանքակարգի հիմքերու, հաւատքի, կարեւանք վերականգնել: Ողնայարները ամուր բռնելու, զգօնութեան, զարթոնքի կոչ, ուղերձ էր ասիկա ՅՄԸՄ-ի Գերագոյն ժողովին կողմէ՝ ուղղուած մեր բազմա-հազար անդամներուն եւ համակիրներուն:

Գործնական աշխատանքներու գծով, նշեմ, որ Պատգամաւորական ժողովի ընթացքին արդէն իսկ հանգանակուեցաւ եւ սնտուկին տրամադրուեցան բաւական մեծ գումար: Ցուցումներ տրուեցան տարբեր շրջաններու մէջ հաստաբար ձեռնարկներ կազմակերպելու եւ կամ այլ ձեռնարկներու հաստատեցնելու որոշ մեկ բաժնիք տրամադրելու այդ սնտուկին:

Կը սպասուի ունենալ նաեւ նուիրատուութիւններ: Տեղին է յիշել հետաքրքրական եւ անակնկալ նուիրատուութիւն մը: ՅՄԸՄ-ական ամուր մը իրենց ամուսնութեան տարեդարձին առիթով պատկառելի գումար մը՝ 1300 տուար տրամադրեց «ՅՄԸՄ-Արցախ հիմնադրամ»-ին: Պիտի փորձենք աշխարհի ամենէն ասան բաւով՝ դրամով, կտրելով այդ սնտուկը, քիչ մը ժայտ վերադարձնելու եւ՛ Արցախի մեր ՅՄԸՄ-ականներու, եւ՛ ՅՄԸՄ-ականներու պարագաներու կամ արցախցի մեր արիւնակիցներու դէմքերուն: Պիտի փորձենք այս սնտուկը միշտ լեցուն պահել, որպէսզի այդ ներդրուած գումարներով օժանդակենք անոնց մեր կարելիութեան սահմաններուն մէջ թէ՛ աշխատանքի, թէ՛ ուսման, թէ՛ առօրեայ կարիքներուն:

«Ա.».- Պատգամաւորական 13-րդ ժողովի ուշագրաւ եւ կարեւոր կետերէն մէկն էր եւս Արցախի որոշին գեղեղունը եւ Արցախը խորհրդանշող պեճի տեղադրումը սկստուական թէ մարզական տարազներուն վրայ, ինչպէս նաեւ՝ բոլոր գործունեութիւններուն կամ յաստարկական-քարոզական ծրագիրներուն մէջ հիմնական եւ մնայուն տեղ տրամադրելու Արցախին: Ի՞նչը՞ տրուեցաւ այս որոշումը եւ կը կարծէ՞ք, որ իր նպատակին պիտի ծառայէ:

Յ. Խ.- Նորութիւնն է՛ այս: ՅՄԸՄ-ը ասէլ առաջ ալ կատարած առաքելութիւնը, երբ ազատ ու անկախ Յայաստանի վտարուեցան հայրենիքէն, ու նաեւ՝ դժբախտաբար խորթ նկատուեցան սփիւռքի մէջ՝ կոչ մը մեր հայրենակիցներու կողմէ, ՅՄԸՄ-ը միշտ բարձր պահեց գայն, բոլոր գլուխներէ անելի բարձր:

Եռագոյնը խորհրդանշում էր ու ներկայ մեր բոլոր տղանցներուն, մեր բոլոր հանդիսութիւններուն, գայն կրած ենք մեր տարազներուն վրայ, մեր սրտերուն եւ հոգիներուն մէջ, Եօթանասուն տարի եւ անելի, միշտ յուշելու՝ բոլորին, որ կայ վերադարձ: Եւ ամենայն հպարտութեամբ եւ հոգեկան հիմունքով՝ մենք ՅՄԸՄ-ականները՝ Եռագոյնի պահպանողը, վայելած ենք անոր վերադարձը իր պատուանդանը:

Այսօր, այդ խոստումը անգամ մը եւս կու տանք, Պատգամաւորական ժողովը անգամ մը եւս ուխտեց, այս պարագային՝ Արցախի համար: Այդ է, որ մենք պիտի փորձենք իրականացնել, ազատ ու անկախ Արցախի դրօշը ներկայ պահելով հոն, ուր ՅՄԸՄ-ականներս կանք եւ Արցախը խորհրդանշող յատուկ պեճերը կրելով մեր տարազներուն վրայ՝ ամեն օր մեր ժողովուրդին յիշեցնելու ու յուշելու, թէ կայ երազ մը, որ պետք է իրականանայ:

Զետեալ որոշումը այդ է՛ պեճերը, դրօշը, զինանշանները պիտի պահուին, մինչեւ որ վերադառնան իրենց իրաւասիրող՝ անկախ Արցախի ժողովուրդին, վերադառնան իրենց պատուանդանը, անգամ մը եւս Արցախի դրօշը ծածկին ՅՄԸՄ-ի մասնաճիւղի ականքին ճակատին եւ Արցախի խորհրդարանի շէնքի զագաթին:

«Ա.».- ՅՄԸՄ-ը այն միութիւնն է, որ իր շուրջ կը համախմբէ աշխարհասփիւռ նոր սերունդը՝ տարբեր տարիքներով, գաւազները կը ողէ աշխատանքի, համախմբումի, ազգային արժեքներու պահպանման ու տարածման՝ հակառակ իւրաքանչիւր գաղութի ունեցած իւրայատուկութեան: Ի՞նչ է այս միութեան մէջ առկա սերունդը, գաղտնիքը:

Յ. Խ.- Յայ իրականութեան մէջ ՅՄԸՄ-ը կը մնայ նոր սերունդները ներգրաւող ամենէն աշխուժ, ամենէն բազմանդամ եւ ամենէն տարածու միութիւնը: Ներուժը պետք է փնտռել իր 106 տարուան փորձառութեան եւ վաստակին, անժամանակ «Նշանաբան»-ին՝ «Բարձրագիւր-բարձրացուր»-ին, իր «Նպատակ»-ին մէջ: ՅՄԸՄ-ը է՛ր, է՛ պիտի մնայ իմացական եւ հոգեկան բարձր արժանիքի տեք, ազգաւոր եւ հայրենասէր Յայկի ծոռներու ամենասիրելի միութիւնը:

Իսկ գաղտնիքը հաւանաբար իր կառուցային կազմուածքն է, ուր կենսունակութիւն կը կայ՝ աշխատանքի, թէ՛ մտքերու արտայայտման եւ քննարկման, թէ՛ որոշումներու կայացման:

Այդ բրգածէ կառոյցը տուած է հիմք՝ կենսունակ



Համա-ՅԱԿՄ-ական 12-րդ բանակում մասնակիցներ

միութենական պահելու, ուր ամեն անգամ արտայայտություն, կարծիք փոխանակում, որոշումներ կայացնելու գործընթացին մասնակցելու, հաշտությունը պահպանելու հրահանգը ունի. սակայն ունի նաև պարտականություններ ստանձնելու և ժողովներում տրուած որոշումները յարգելու պարտաւորութիւն, ուր բոլոր միութենականները ունին համահասար իրաւունքներ, սակայն պարտին միութենական աշխատանքներում և ծրագիրներում գործադրութեան ճամբով տալ իրենց առաւելագոյնը ազգին ու հայրենիքին:

«Ա.». - Ըստ ձեզի, 21-րդ դարում այս արագ և գերադասւած օրերում, ինչպէ՛ս կը գատորոշուի կամ պէտք է գատորոշուի ՅԱԿՄ-ականը, հայ սկսուողը, հայ մարզիկը օտար մարզիկները և սկսուողները: Ի՞նչ պարտականութիւններ և պարտաւորութիւններ ունին ան իր ընտանիքին, շրջապատին, միութեան, ազգին և հայրենիքին հանդէպ:
 Յ. Ն.- ՅԱԿՄ-ականը ազգասեր հայ է, բայց ազգայնամով չէ. այլասեր չէ, բայց այլը յարգող է:

թեմաբ, համակարգով և տնտեսական հզօրութեամբ:

«Ա.». - ՅԱԿՄ-ի շարքերում մաս կը կազմեն բազմաթիւ հայրողներ՝ Հայաստանի թէ սփիւռքի մէջ, բայց կան նաև հայեր, որոնք այս միութեան մէջ ըլլալու և միութենական փորձառութիւնը օգտուելու առիթը չեն ունեցած: Ձեր խօսքը՝ մեր այդ հայրողներում, կոչը թերեւս՝ միանալու ՅԱԿՄ-ին:

Յ. Ն.- ՅԱԿՄ-ի նորաստեղծ երիտասարդական ճիւղի յառաջացման նպատակներն կարեւորագոյնը այդ է: Շուտով, երիտասարդական ճիւղի ստեղծման, նպատակներու և աշխատանքներու գծով Կեդրոնական վարչութիւնը կը կատարէ յայտարարութիւն՝ ուղղուած հայ հասարակութեան, բայց մասնաւոր՝ երիտասարդներուն:

Տունն անելի տաք տեղ չկայ, և այսօր այդ տունը, տուններն մէկը, տուններն ամենն ընդարձակը, այսօրուան իրականութեամբ՝ ՅԱԿՄ-ը, զիրենց պիտի կանչէ ներս, տուն: Եզմարիտ իրականութիւն է, որ կայ հայ իրականութեան մէջ գործող միու-



Կեդրոնական վարչութեան լիազօւմար Ալմելոյի մէջ

Սակայն ՅԱԿՄ-ականը «նահատակ ցեղի անմահ»-ն է, ՅԱԿՄ-ականին համար միայն «Կատարն հայրենի»-ն գրաւէր Արարտն է, որուն կատարին ՅԱԿՄ-ականները միշտ կ'ուխտեն «Կաթողել դրօշակն Եռագոյն»։ ՅԱԿՄ-ականները այս իտեպը իրականացնելու պատրաստ անասան յառաջացող «Կամաւոր բանակ»-ի տարագաւորն են:

թիւներու 18-էն 35 տարիքի անդամներու տասնապատիկ համարով երիտասարդներու կայն հասարակութիւն մը, որ պէտք է ներառուի մեր միութենական համախումբ աշխատանքներում մէջ:

Առաւել, մերօրեայ բարոյական ու վարքային անուղղայ և անբարեխոյս տարածուած գտած վատասերումի ալիքները, մեզի կը պարտադրեն ան-



Ալմելոյին՝ ՅԱԿՄ-ի Կենտրոնի «Արարտ» մասնաճիւղի թանգարան

Այս գաղափարական հիմքով և հայ ժողովուրդին ու ամբողջական Հայաստանի բարօրութեան ի սպաս դրած հայրողներն են ՅԱԿՄ-ականները:

Վերոյիշեալներն ոչ իսկ մէկը կրնայ հասկնալ օտար մարզիկը կամ սկսուողը, իսկ եթէ հասկնայ՝ իրագործելու պատրաստ չ'ըլլար, իսկ եթէ պատրաստակամութիւն չ'ուիտէ, կը պահանջէ վարձատրութիւն: Հետեւաբար, կամաւոր տարագաւոր չ'ըլլար, այլ միայն վարձկան:

Բացատրելու համար հայ է օտար մարզիկները գատորոշող յատկանիշերը բաւարարուիչը այսբանով:

Գալով հարցումի երկրորդ բաժնին, ՅԱԿՄ-ի պարտականութիւններու և պարտաւորութիւններու ծիրը, ինչպէս յիշեցի, ազգի և հայրենիքի բարօրութիւնն է, բարգաւաճումն է: Ազգ, իր բոլոր բաղադրիչ տարրերով՝ ընտանիք, դպրոց, կրօն-եկեղեցի, մշակոյթ, բարքեր: Հայրենիքը, իր հողով, ապահովութեամբ, ազգային ժառանգու-

միջապէս կոչ ընել այդ «դուրս»-ի երիտասարդներուն՝ մուտք գործելու մեր օճախները, ոչ անպայման իբրեւ միութենականներ, ուր անելի ապահով պիտի ըլլան և առիթը պիտի ունենան իրենց գիտելիքներու պաշարը և իրենց փորձառութիւնը ի սպաս դնել հայ հասարակութեան, անելի կազմակերպ աշխատանքի ճամբով:

Այսօրուան «դուրս»-ի նպատակը քանդել է ազգայինը, փոշիացնել բարոյական արժանիքները և արժեհամակարգը:

Կը յուսանք երիտասարդութեան ուղղուած մեր հայախաւաքի կոչը կը գտնել իր արձագանքը:

Հարցագրոյցը կ'ուզեմ փակել 106 տարեկան միութեան անդամներուն ուղղուած հրամանով՝

ՅԱՌԱՉՉ, ԿԱՄԱՌՈՐ ԲԱՆԱԿ:

Հարցագրոյցը վարքե՛
ՄԱՐԻՆԱ ՀԱՄԱՍՏՅԱՆ

ՄԵՍՐՈՊԵԱՆ ՎԱՐՓԱՐԱՆԻ ՀԵՔԻԱԹԻ ՀՐԱՇՔ ԱՂԶԻԿՆԵՐՆ ՈՒ ՏՂԱՔԸ

- Սահհարը եկաւ, գետինը զելզել եղաւ, ալաֆ ելաւ:

Բակին մէջ աշակերտ մը ընկերներուն կը պատմէր դիտած շարժապատկերը, երբ ես առաջին անգամ Մեսրոպեան վարժարան կը մտնէի 1979-ի առաւօտ մը:

Երկրորդականի դասարաններուն համար հայ գրականութեան ուսուցիչի կարիք կար էր Պուրծ Համուտի հայ կաթողիկէ Ս. Փրկիչ Եկեղեցւոյ ժողովրդապետութեան շրջանակի հեղինակաւոր պատասխանատուներն տեր էն տիկին Հայիկա և Սարի Չաքմաքեաններ՝ պատուական, ազնուական հայրողներ, ինծի առաջարկած էին, որ դպրոցի տնօրէն Մեսրոպ վրդ. Ճուռեանին ներկայանամ: Մինչ այդ ես թե՛ն տարի մը պաշտօնավարած էի Գահիրէի Գալուստեան վարժարանին մէջ, սակայն ընդհանրապէս անկէ առաջ եւ ետք լիբանանեան դէպքերու ընթացքին, Տորայի մայր ճամբուն մէկ անկիւնը, մայթին վրայ գլխարկ կը ծայլէի:

Դպրոցի բակին մէջ երբ լսեցի «հայերն» նախադասութիւնը և տեսայ «սահհար»-ի ժապաւեններ դիտող աշակերտները, մտածեցի, որ զանոնք Մեծաբնեցով, Չարեանով, Համաստեղով խանդավառելը քնա իմ գործս չէ, եւ որոշեցի անմիջապէս հեռանալ: Ետ դարձայ, բայց պահակը ըսաւ, որ տնօրէնը զիս կը սպասէ: Ըսի՝ ելլեմ, պատրուակ մը փչեմ, հեռանամ:

Վարդապետը յարտապէս արտաքինեւ դժգոհ, պահ մը լուռ նայեցաւ անխնամ մագրուս, երկար մօրթեմ, մաշած ճիւղիկ, առանց գուլպայի եսպատրիկներուս, ապա հարցուց.

- Կրնա՞ն այս տղաքը կառավարել:
- Այո՞, անակնկալ դուրս թռաւ բերես, մինչ ես պատրաստուած էի «ոչ» ըսել:

Տնօրէնը զիս տարաւ 12-րդ դասարան, եւ երբ կ'ուղղուէիք դէպի ուսուցիչին գրասեղանը, առջեւի շարքը նստած աշակերտ մը բովիկին ըսաւ.

- Լա՛ն, ես ասոր գիտեմ, փողոցը զլխարկ կը ծայլէ:

Ի՞նչ կ'ըլլար: Այդ չեղաւ: Ձեւացուցի, թէ չլսեցի:

- Ասիկա ձեր հայերէնի ուսուցիչն է, իրեն ըսած եմ, որ դասերը շատ ծանր ըլնէ: Արտօնութիւն ունեցողները կրնան ներկայ ըլլալ այս պահերուն,- ըսաւ տնօրէնը և քալեց դէպի դուրս:

Չորս-հինգ աշակերտ հետեւեցան անոր: Ո՛չ, շատ եղաւ, ա՛լ պէտք չէ մնալ:

Սկսայ քալել դէպի դուրս, բայց անզիտակից մղումով մը դուռը փակեցի և վերադարձաւ տեղս: Քանի մը երկվայրկեան դիտեցի դէմս նստած շուրջ 30 աշակերտները, որոնք յայտնապէս սպասողական վիճակի մէջ էին բան մը ընելէ առաջ, երբ յանկատարաստից սկսայ խօսիլ:

Մտաւորապէս քառասուն վայրկեան ի՞նչ բաներու մասին խօսեցայ, անկեղծ չեմ յիշեր, միայն գանգը երբ ինչնք, եւ պահը վերջացաւ, բոլորը շուրջս հաւաքուեցան: Սկսաւ տարաբնոյթ հարցումներու տարաք մը. ֆուլթայլի միջազգային ո՞ր հաւաքակապին կամ ակումբին համակիր էի, ո՞ր դերասանը կը սիրէի, «Սթար Բուրդ» ժապաւենը հաւան՞ծ էի, Մայքըլ Ճեքսթընի երգերը մտիկ կ'ընէի՞, հայկական հողերը կարելի՞ է ազատագրել, ո՞ր փողոցին մէջ գիշերը տղոց հետ պահակ կը կենայի եւ այլ: Հարցումները կը շարունակուէին, մինչ յաջորդ դասի ուսուցիչը դուրսը կը սպասէր...

Յաջորդ օրը այն տղաքը, որոնք արտօնութիւն ունէին հայերէնի դասապահներուն չմասնակցելու, եկան ըսելու, որ կ'ուզեն ներկայ գտնուիլ դասերուն:

Եւ սկսաւ արկածախնդրական հեքիաթը...

Հայ գրականութեան դասագիրքէն անելի՞ նախաձեռնուեցան գիրքերու ընթերցանութիւն, արտադասարանային և արտադպրոցական գործունէութիւններ:

Խմբակ մը դասերէն ետք դպրոց մնալով՝ շաբաթական հերթականութեամբ պատրաստեց աշակերտական պատի թերթը, այլ խմբակ մը մաս կազմեց սիւն ըլլալին, անելի մեծ թիւով աշակերտներ՝ ֆուլթայլի խումբին, կազմակերպուեցան ընդհանուր զարգացման և արտասանական մրցումներ:

Արտադպրոցական գործունէութեան ծիրին մէջ գրական հետաքրքրութիւններ ունեցող աշակերտներ անդամակցեցան Համագալիկի Պ. Համուտի մասնաճիւղի Գրասէրներու շրջանակին: Համագալիկի շրջանակին վարչութեան գրատարած գործադիր յանձնախումբը կազմուեցաւ Մեսրոպեանի բարձրագոյն դասարաններէ 12 աշակերտներով, որոնք վստահուեցաւ «Յ. Տէր Մելքոնեան» թատերասրահին մէջ տեղի ունեցող մեծ ձեռնարկի գիրքի ցուցահանդէս-վճառքը, որ մեծ ձեռնահասութեամբ իրականացուցին: Դերասանական հետաքրքրութիւններ ունեցող քանի մը աշակերտներ միացան Համագալիկի Պ. Համուտի մասնաճիւղի «Լեւոն Շանթ» թատերախումբին և դերեր ստանձնեցին ներկայացումներու մէջ: Պէյրուսի շարժապատկերի սրահներուն մէջ դասարանով դիտեցին այդ օրերուն ցուցադրուող լուսագոյն ժապաւենները, ներկայ զտնուեցան լիբանանեան և հայկական մշակութային ձեռնարկներու, որոնք մասին քննարկումներ եղան դասապահներուն: Քանի մը աշակերտուիկներ միացան «Վանայ Ձայն»-ի անձնակազմին, յայտագիրներ պատրաստեցին և հաղորդեցին:

Միաժամանակ կը սաստկանային լիբանանեան ներքին կռիւները, անակնկալ ռմբակոծումները, կ'առնէանգուէին և կը սպաննուէին հայեր, հայ դէպավարներ, Միացեալ Նահանգներու և Եւրոպայի մէջ հայ ազատամարտիկներ կը հարուածէին թրջական թիրախներ, տեղի կ'ունենար Գիւմրիի երկրաշարժը, Հայաստանը կ'անկախանար, Շուշին կ'ազատագրուէր: Այս դէպքերուն մասին ծրագրուած կը խօսէր դասարանին մէջ, կարծիքներ կ'արտայայտուէին:

ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ ՔՈՒԿԴ Է...

Աւագ շաբթուան կամ Տէրուկի շաբթուան երկրորդ օրը՝ Աւագ երեքշաբթին, կը նկատուի Զրիստոսի երկրաւոր առաքելութեան, քարոզչութեան և գործունէութեան վերջին ու ամենն երկար օրը: Աւանդութեան համաձայն, այդ օրուան ընթացքին Զրիստոսի քարոզչութիւնը սկսած է առաւօտ կանուխէն և տեսած է մինչեւ ուշ գիշերը: Աւագ երեքշաբթին Հայ եկեղեցւոյ սրբազան հայրապետներուն ու մաքրակենցաղ հայրերուն կողմէ կոչուած է «Յիշատակ տաքը կուսանաք»: Այս անունը առնուած է Մատթէոսի աւետարանին 25. 1-13 հատուածէն, ուր յիշուած է Զրիստոսի կողմէ պատմուած տաքը կոչուեցան (հիկը իմաստուն և հիկը յիմար) առակը: Յստակ է, որ Զրիստոս այս առակը չէ պատմած այդ օրուան ընթացքին, սակայն Հայ եկեղեցւոյ հայրերը զայն ներառած են Աւագ երեքշաբթիի արարողութեանց մէջ, որովհետեւ այդ օրուան խորհուրդը առաւելաբար կը կեդրոնանայ Վերջին դատաստանին վրայ, իսկ Վերջին դատաստանը բացատրող ամենն գրաւիչ առակը տաքը կոչուեցան առակն է:

Այս գրութիւնը վերոյիշեալ աւետարանական հատուածին մեկնութիւնը կամ բացատրութիւնը չի ներկայացնել, ոչ ալ՝ Աւագ երեքշաբթիի խորհուրդը, այլ՝ իմաստուն և յիմար բառերուն հակիրճ խորհրդածութիւն մը:

Ծիղո է, որ աւետարանական հատուածին մէջ յիմար բառը կը գործածուի, սակայն իրականութեան մէջ աշխարհի վրայ ի բէլ յիմար մարդ չկայ: Հայրն Աստուած իւրաքանչիւր մարդ արարածի տարբեր մտային կարողութիւն և իմաստութիւն, զանազան շնորհներ և ձիրքեր տուած է: Իւրաքանչիւր մարդ իր ունեցած աստուածատուր շնորհները զարգացնելու կարելիութիւնը և ձեռնաստութիւնը ունի: Ան որքան աճեցնէ իր շնորհները, ճարտարութիւններն ու միտքը, այնքան իմաստուն կը դառնայ: Ասոր առընթեր, մարդ որքան վատնէ իր շնորհները, ատակութիւնն ու միտքը, այնքան յիմար կը դառնայ: Ահաւասիկ՝ կենսքին կողմէ մարդուն տրուած մարդանալու մարտահրաւերը:

Կը պատմուի, որ մարդ մը ճամբու ընթացքին մեծ խանութ մը կը տեսնէ, որուն վրայ գրուած էր՝ «Աստուծոյ խանութ»։ Մարդը խանութը մտայնաբար ներս կը փութայ՝ մտածելով, որ իր բոլոր ուզածները հոն կրնայ գտնել: Հրեշտակը զինք կը դիմաւորէ և կ'ըսէ. «Բարի եկած ես, այստեղ Աստուծոյ խանութն է, ի՞նչ որ կ'անցնի քու մտքդ, հոս կրնաս ստանալ»: Մարդը անմիջապէս կը պատասխանէ. «Հաճի՛ս ինծի բեր ետքը լիթը երջանկութիւն, տաքը քիօ առողջութիւն և վեց տուի՛ս ալ սեր»: Հրեշտակը պաշտօնական երթալով՝ կը բերէ փոքրիկ արկղ մը: Մարդը զարմանքով կ'ըսէ. «Ես շատ բաներ պատուիրեցի, իսկ դուն միայն այս փոքրիկ արկղը բերիր»։ Հրեշտակը ծայրտակ կ'ըսէ. «Աստուծոյ խանութն դուն միայն սերմերը կը ստանաս: Այս սերմերուն խնամքը, գանոնք աճեցնելը և անոնցմէ պտուղ ստանալը քեզմէ կախեալ է»:

Սիրելի՛ հաւատացեալ ընթերցող, իմաստութիւնն ու յիմարութիւնը կենսքի ընտրանք է: Աստուած քեզի և ինծի նոյն որակով, բանակով և գործունէութեամբ սերմեր տուած է: Մեզի կը մնայ զանոնք ինամելը, աճեցնելը և անոնցմէ պտուղ ստանալը, կամ՝ գաւունք արկղին մէջ պահելն ու չորացումի ենթարկելը:

Հոգեւոր կենսքի մէջ ալ պարագան նոյնն է. կայ հոգեւոր իմաստութիւն և, անոր զուգահեռ, հոգեւոր յիմարութիւն: Սողմուն իմաստուն Առակներու գիրքին 1. 7-ի մէջ կ'ըսէ. «Իմաստութեան սկիզբը Տիրոջ վախն է, բայց յիմարները իմաստութիւնն ու կրօնութիւնը կ'անարգեն»։ Թե՛ն կարճ համար մըն է, սակայն ան իր մէջ խորին խորհուրդներ կը պարունակէ: «Իմաստութեան սկիզբը Տիրոջ վախն է»: Ի՞նչ վախի մասին է խօսքը: Հին կտակարանի երայերէն քննադիրին մէջ վախ բառին փոխարեն՝ գործածուած է «yir.at» բառը, որ վախտ անելի երկիւղի իմաստ ունի: Ուրեմս կարելի է ըսել, որ մարդ արարածը հոգեւոր իմաստութեան հասնելու համար պէտք է Տիրոջ հանդէպ երկիւղ ունենալ: Երկիւղը այն զգացում է, որ ռեւել անձ կ'ունենայ հեղինակութեան (Authority) մը հանդէպ: Երկիւղը իր մէջ կը կրէ յարգանք և սեր: Համար կ'ուզէ ըսել, թէ ինչպէս որ մենք հեղինակութիւն մը յարգելու համար անոր խօսքերը, թելադրանքները եւ իրամանները կը կատարենք, այնպէս ալ հոգեւոր իմաստութիւն ունենալու համար պէտք է Աստուծոյ խօսքերը, պատուիրանները, օրէնքները եւ ուսուցումները կատարենք: Մէկ խօսքով, պէտք է մեր կենսքը ապրիւք Աստուծոյ խօսքերուն համաձայն, միշտ Զրիստոսի օրինակին հետեւելով: Այս երկիւղը պէտք չէ ունենալ վախոցողի, տկարի և ծառայի հոգեբանութեամբ, այլ՝ սիրոյ հոգեբանութեամբ: Ինչպէս որ երբ ռեւել հեղինակութիւն յարգելով՝ անոր ուզածները կը կատարենք, երկկողմանի սեր կը ստեղծուի, այնպէս ալ, երբ Աստուծոյ խօսքերուն հանդէպ յարգանքով շարձախուած երկիւղ ունենանք, մենք կը սկսինք զԱստուած սիրել, և այդպիսով մեր մէջ սեր կը ծնի անոր իւրաքանչիւր խօսքին, պատուիրանին, օրէնքին և ուսուցումին հանդէպ: Իսկ ինչո՞ւ՝ «Իմաստութեան սկիզբը» կ'ըսուի: Որովհետեւ Աստուծոյ երկիւղը ունենալը հոգեւոր իմաստութեան միայն սկիզբն է, առաջին քայլն է: Անոր շարունակականութիւնն ու զարգացումը մտքմէ կախեալ է: Եթէ մեր հոգեւոր իմաստութեան ճամբան լուսաւորեցէ Աստուծոյ երկիւղով, այդ ժամանակ անկիպ սովորական գործ մը կամ կատարում մը ըլլալէ կը դադրի և կը դառնայ առաքելութիւն, և անով մեր կենսքը կ'առաջնորդենք:

Սիրելի՛ հաւատացեալ ընթերցող, ինչպէս որ սովորական է հոգեւոր իմաստութիւնը զգաւ ընտրութիւնն է, այնպէս ալ սովորական է հոգեւոր յիմարութիւնը ազատ ընտրութիւնն է: Յիշենք, որ ի բէլ յիմար կամ իմաստուն մարդ չկայ: Մարդը ի՞նչ ազատութիւն կ'ընտրէ իմաստուն կամ յիմար ըլլալ: Ուրեմս ընտրութիւնը քուկդ է...

ԱՍՈՍԵՆ ԱՐԸ. ԳՍՏԵՂԵԱՆ
Անթիլիաս, Լիբանան

ԹՈՐԳՈՍ
Շաբ.ը՝ էջ 6

ԼԻԲԱՆԱՆԻ Դ. ԴԱՍԱԿԱՐԳԻ ԱՆՈՅՇԱՆՈՒԹԻՒՆ

ՀՄԸՄ ՊՈՒՐՆ ՀԱՄՈՒՏ ԿԵ ՍՈՒՐԱՅ



Շաբաթ օր ՀՄԸՄ Պուրն Համուտ շարունակեց իր յաղթարշավը, եւ անոր վերջին «զոհ»-ն էր Անիի Սարպան, որ 47-րդ վայրկեանին դաշտին վրայ օրինական թիւ չունեցողութեամբ (տուազագոյնը 7 պետք է ըլլայ), իրաւարարը մրցումը աւարտեց 6-0 արդիւնքով:

խումբերը:

Այս հանգրուանին 12 ընտրուած խումբերը՝ Պէյրուսէն (1 կամ 2), Լեռնալիբանանէն (3 կամ 4), հիւսիսային Լիբանանէն (2), հարաւային Լիբանանէն (3) եւ Պեքայէն (2), կը բաժնուին 2 խմբակներու, եւ չեզոք դաշտի վրայ 5 մրցում կատարելով կը յստականայ վերջնական դասաւորումը: 2 առաջին դիրքերը գրաւող խումբերը երկու խմբակներէ կը բարձրանան Գ. դասակարգ:

Հասան Չապայթեր 10-րդ վայրկեանին արդիւնքը վերածեց 3-0-ի: 22-րդ վայրկեանին Երուսաղէմ Գառնի մարզի ջազող իր հեթ թիւք՝ Նշանակելով ՀՄԸՄ-ի 4-րդ կողմը: 2 վայրկեան ետք Սերժ Օսթբանի կարգն էր անցնելու կողմը: 5-0: 45-րդ վայրկեանին Տիգրան Վարդան (Տիգր) Նշանակեց ՀՄԸՄ Պուրն Համուտի 6-րդ կողմը: Բ. կիսախաղին կրնար շարունակուիլ կոլերու փառատօնը, սակայն Անիի Սարպա այնպէս յարմար տեսաւ եւ անուղղակի ձեւով «բաշտեցաւ» մրցումները:

Տակաւին կանուխ է յաջորդ հանգրուանին մասին խօսելու, որովհետեւ մեր դիմաց ունինք Յիլալ Լարա խումբը յառաջիկայ շաբաթ, եւ մրցումի առանձին կերդրուածութիւն կարիքը կայ: Ինչպէս նշեցինք, մրցում մը ես յաղթելով Լեռնալիբանանի պայտեան կըրնանք հռչակուիլ, տիտղոս մը, որ մեր համակիրներուն պիտի ուրախացնէ: Տարիներէ ի վեր ՀՄԸՄ-ի ֆուլթայի համակիրները ուրախութիւն չեն վայելած: Վերջին անգամ 2013-2014-ին ՀՄԸՄ Պէյրուսէն 3-րդ դասակարգէն բարձրացած էր 2-րդ: Այդ տարեշրջանէն ետք՝ ոչ մէկ ուրախանալիք բան: ՀՄԸՄ Պէյրուսէն 5 տարեշրջան մնալէ ետք 2-րդ դասակարգ, 2018-2019-ին ինկաւ 3-րդ դասակարգ, իսկ 2020-2021-ին՝ 4-րդ:

ՖԻՖԱ-Ի ՀԱՐԹՈՒՆ ՄՐՑՈՒՄՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆ, ՖՐԱՆՍԱ ԵՒ ԱՆԳԼԻԱ ՊԱՐՏՈՒԵՑԱՆ

ՖԻՖԱ-ի շաբթուան մրցումները սկզբնական անցեալ շաբաթավերջին: Երեւանի մէջ, ուրբաթ իրիկուն, Հայաստանի ազգային խումբը 1-0 արդիւնքով պարտութիւն մը կրեց Զոսովոյի դէմ մրցումին:



ունենալէ ետք 15-րդ վայրկեանէն սկսաւ ճնշել Գերմանիոյ բերդին վրայ, բայց Թետ Շթելկըն մնաց անդրդուէլի: Ըմպպիլէ առիթով մը փորձեց Թետ Շթելկընի վրայէն դրվել գնդակը, բայց Պարսելուսայի բերդպահպարտ արթուն էր եւ փրկեց կացութիւնը:

25-րդ վայրկեանին Միլոշ Բաշիցա Նշանակեց Զոսովոյի կողմը: 45-րդ վայրկեանին Հայաստան արիւր շաբաթուան արդիւնքը հաւասարեցնելու: Արդարեւ, Վահան Պիչախչեանի վրայ կարծիք փոխել մը ետք, իրաւարարը փնտրելի մը սուլեց ի նպաստ Հայաստանի, որ նոյնիմանք Պիչախչեանը հարուածեց, բայց Զոսովոյի բերդի սինը զայեց անոր հարուածը:

Դաշտին կերդրող՝ Թոնի Քրուսի վերադարձով, Գերմանիա շատ լաւ ձեւով գնդակ կը բաժնէր երիտասարդ արագ գոյգին՝ Մուսիլա-Վիլրիցին, որուն շատ անգամ դիրքութեամբ խուժեցին ֆրանսական մեծ քառակուսի:

Երկրորդ կիսախաղին, ազգային խումբը անելի լաւ խաղաձող մը կիրարկեց՝ ստեղծելով քիչ թէ շատ վտանգաւոր առիթներ, սակայն գանձեց կողմ վերածելը դժուար եղաւ: Յիշեցնենք, որ այս հանդիպումը Հայաստանի ազգային խումբի 250-րդ մրցումն էր: Խմբապետ Վարդազատ Քարոյեան իր 80-րդ մրցումը ունեցաւ ազգային խումբին շապիկով: 26 մարտին (վաղը) Հայաստան Փրակայի մէջ ելոյթ մը պիտի ունենայ Չեխիոյ դէմ: Պրագիի յառաջապահ Էնտրիք, Ռեմպալի մէջ, Պրագիի ազգային խումբին հետ կ'ըն նշանակեց, որուն շնորհիւ իր խումբը յաղթեց Անգոլոյ:

Բ. կիսախաղին, Գերմանիա անելի տերապետեց, եւ 4-րդ վայրկեանին Մուսիլայի մէկ յարձակումէն ետք գնդակը հասաւ Զայ Հակոբեցիի, որ անսխալ էր կոլին առջէլ՝ նշանակելով Գերմանիոյ 2-րդ կողմը: Այս կողմէն ետք երկու խումբերն ալ փոփոխութիւններ կատարեցին եւ բազմաթիւ յարձակումներ կազմակերպեցին, բայց արդիւնքը մնաց անփոփոխ: Վերջին անգամ 2023-ի սեպտեմբերին, Գերմանիոյ մէջ, Ֆրանսա 2-1 արդիւնքով պարտութիւն մը ես կրած էր:

17 տարեկան Էնտրիք, որ իր առաջին մրցումը կ'ունենար Պրագիի տարածքում, եղաւ ամենէն կրտսեր մարզիկը, որ Ռեմպալի մէջ կ'ըն նշանակեց: Էնտրիք, որ Փալմէյրոսի հետ կը խաղայ, այս ամառ կը միանայ Ռեյա Մատրիտին: Փարիզի մէջ, Ֆրանսայի ազգային խումբը, որ կը նկատուի աշխարհի ամենէն զօրաւոր խումբերէն, հիւրընկալեց Գերմանիոյ ազգային խումբը, որ վերջին 10 մրցումներուն միայն 2 մրցում կրցած էր յաղթել: Մրցումի 7-րդ երկվայրկեանին Ֆրանսան Վիքը անգուպիկ հարուածով մը նշանակեց Գերմանիոյ առաջին կողմը:

Table with 4 columns: Team Name, Score, and other details. Includes teams like England, France, Germany, etc.

«ԵՆ. ՊԻ. ԷՅ.»

ՄԱՆԶ ԅԱՂԹԵՑ ԵՒ 6-ԲԴ ԴԻՐՔԸ ԳՐԱԽԵՑ

Ֆինիքս Սանգ երկէ Թեքսասի մէջ մրցում մը ունեցաւ տեղույն Սան Անթոնիո Սփըրզի դաշտին վրայ, ուր փայլեցաւ Տեյլն Պուրըր - Քեյլն Տիլքեյն յոյգը: Ֆինիքս 131-106 արդիւնքով յաղթեց եւ պահ մըն ալ 32 կետի առաւելութիւն ունէր: Տեյլն Պուրըր 32 կետ նշանակեց եւ 4-րդ մասին նստեցաւ հանգստանալու:

Նակեթը, որմէ կը բացակայէին Լիբրա Երեյ Եւ Ծամալ Մարէ, կրցաւ խմբային խաղով յաղթական դուրս գալ: Ռեճի Ճեքսըն (23 կետ), Արոն Կորոնը (22 կետ եւ 12 ռիպաունտ) եղան Տեյլն Պուրըրի աստղերը: Ռոյքի Տիլքեյն Ռիք, որ անցեալ տարի Լիբանանի պայտեան Ռիստիի հետ մասնակցած էր, 24 կետ նշանակեց ի նպաստ Թրէյլ Պլեզըրդի:

Table with 3 columns: Player Name, Team, and Points/Rebounds. Lists players like Dujosevic, Robertson, etc.

Տեյլն Պուրըր 21 կետ անելուց ի նպաստ Պոսթըր-Լի, որ մնաց լաւագոյն արդիւնքները արձանագրած խումբը: Սերիք Ուայթ (28 կետ) - Ճեյսըն Թեյթըմ (25 կետ) յոյգը փայլեցան: Ուայթ եւ Թեյթըմ 5-ական 3 կետնոց կողովներ նշանակեցին ի նպաստ Պոսթըր-Լի, որ 23 յաջող 3 կետնոց կողովներ նշանակեց Շիքսֆորթի դէմ մրցումին:

Table with 3 columns: Player Name, Team, and Points/Rebounds. Lists players like James, Robertson, etc.

«ՖՈՐՄԱՒԻԼ 1»

ՔԱՐԼՈՍ ԱՍՅՆՑ ԿԸ ՇԱՀԻ ԱԲՏԱՐԱԼԻՈՅ ԿՐԱՆ ՓՐԻՆ

Քարլոս Ասյնց եւ Շարլ Լըքլէր Ֆեռարիի հետ 1-2 իրագործեցին երկուսն Աւստրալիոյ կրան փրիին, որուն ընթացքին աշխարհի պայտեան Մաքս Վերշթափըն 4 շրջան ետք մրցումը լքեց, երբ տեղի անիւնին արգելակի հարցով կրակ առած էր անոր անիւնը: Վերշթափըն վերջին անգամ 2022-ին Աւստրալիոյ կրան փրիին կիսատ ձգած էր մրցումը: Սպանացի Ասյնց, որ 2-րդ շրջանին կրցած էր անցնիլ Վերշթափընին, կրցաւ առաջին դիրքը պահել մինչեւ մրցումի աւարտը: Իր խմբակից Լըքլէր առաջին անիւ փոխուելու պահուն կրցաւ անցնիլ Մաքսֆորթի վարորդ Լաւնտո Նորիսին:

գաւ իր խումբին հետ՝ յայտնելով, որ ինքնաշարժի տեսիլ բաժինը չի կրնար զսպել, բան մը, որ արդէն յստակացաւ, երբ տեղի աջ անիւնը ծուխ եւ կրակ էլլելու սկսաւ: Ասյնց անցեալ տարի միակ անձն էր, որ Ռետ Պուլի մենտալութիւնը կտրած էր Սիլեպփուրի մէջ: Ասյնց հաւանաբար խումբ չունենայ յառաջիկայ տարի, մասնաւորապէս որ Համիլթըն պիտի ըլլայ Լըքլէրի խմբակիցը Ֆեռարիի մէջ:

- Table with 2 columns: Player Name, Points/Rebounds. Lists players like Russell, Leckler, etc.

Մրցումը վերջ գտաւ երեւակայական «սեյֆթի քարով», երբ Ճորճ Ռասըլ, որ Ֆեռանտո Ալուսոյի տէսն կը գտնուէր՝ պայքարելով 6-րդ դիրքին համար, իր Մերսեսի վրայ կորսնցնելէ ետք հաւասարակշռութիւնը, ճամբէն չեղեցաւ զարնուելով պատին, եւ կողմնակի կէցաւ շրջագագի ճամբուն վրայ:

Դաշտը չփրկարուեցաւ, բայց մրցումէն ետք երկու վարորդներն ալ կանչուեցան մրցումի հսկող մարմնին կողմէ, որ Ալուսոն 20 երկվայրկեանով պատժեց՝ գալն իջեցնելով 8-րդ դիրք: Դժուար օր մըն էր Մերսեսի համար, մասնաւորապէս որ 7 անգամ աշխարհի պայտեան Լուիս Համիլթըն 16-րդ շրջանին կիսատ ձգեց մրցումը, երբ ինքնաշարժին շարժիչը խանգարում ունեցաւ: Նորիս Օսթրալիոյ Ֆիաթիի հետ գրաւեց յաջորդաբար 3-րդ եւ 4-րդ դիրքերը, ինչ որ շատ լաւ արդիւնք կը նկատուի Մաքսֆորթի համար: Վերշթափըն խմբակից Սերիք Թեյլն իր Ռետ Պուլով գրաւեց 5-րդ դիրքը՝ չօգտուելով իր խմբակիցին մրցումը կանուխ լքելու:

- Table with 2 columns: Player Name, Points/Rebounds. Lists players like Russell, Leckler, etc.

ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԿԱՐՆ ԼՈՒՐԵՐ

Շարունակուած 2-րդ էջէն

●ԺՈՂՈՎԱՐԿԱՎԱՐԱԿԱՆ հանդիպում պլոքի երեսփոխան Պիլալ Ապտալիւն որոշուեց Պեքրեյի հանդիպումը՝ յոյս յայտնելով, որ այդ համաձայնութիւնը կ'ընդարձակուի եւ ազգային անելի լայն վիճակ կը ստանայ: ●ԳԻՄԱՍԱՐԱՆՈՒԹԻՒՆ դիմադրութեան պլոքի երեսփոխան Հասան Իզզետտին հաստատեց, որ իրենց պիտի շարունակեն զինուիլ եւ իրենց կարողութիւնները բարելաւել, որպէսզի թշնամին դիմադրութեան պատճառով մնայ մտահոգ եւ մնայուն վախի մէջ: ●ԼԱԿԿԻՆ նախարար Ռատիի հազգէն ընդունեց Վատիկանի մէջ Լիբանանի դեսպան Ֆարիտ Ելիսա հազգէնը, որուն հետ քննարկեց լիբանանեան իրադրանքները, ինչպէս նաեւ Պեքրեյի մէջ մշակուող նոր նախաձեռնութեան վերաբերող մարտահրահումները: Հանդիպումին ընթացքին անոնք մտադրեցին, որ Պեքրեյի նախաձեռնութիւնը յաջողութիւն արձանագրէ:

ԹԷ ԻՆՉՊԷՍ ԿԱՐԵԼԻ Է . . .

Շարունակուած 2-րդ էջէն

Թ. Գալայճեան անդրադարձաւ նաեւ ձեռագիր մատենները նկարելու նուրբ աշխատանքին եւ արխիւները պահպանելու յատուկ ձեւերուն: Ան մատենանշեց քոլոր այն տունները, որոնք պետք է նկատուի արխիւն օրագրերի արխիւ պահելու, գայն նկարելու եւ ապա ուսումնասիրութիւններու պարագային գայն օգտագործելու ընթացքին: «Ապագայ լրագրողներ»-ը մեծ հետաքրքրութեամբ հետեւեցան բացատրութիւններուն, ինչպէս նաեւ ծանօթացան ձեռագիր մատենանի մը: Հանդիպումը ունեցաւ նաեւ իր գործնական բաժինը, որուն ընթացքին «Ապագայ լրագրողներ»-ը «Ազգային»-ի «Միայն Պոստապան» մամուլ ուսումնասիրութեան կերպին մէջ վկայեցին արխիւային աշխատանքը, ծանօթացան տարբեր ձեւի սթիլոսկոպիներու դրութեան եւ թուայնացումի ամենէն արդիական միջոցներուն, լուսանկարեցին արխիւներ եւ ծանօթացան ուսումնասիրութեան պարագային այդ արխիւներէն օգտուելու դրութեան եւ թեքնիցներուն: Իբրեւ չորրորդ սերունդ «Ապագայ լրագրողներ»-ու ծրագրին կը մասնակցին Ազգային միացեալ վարժարանին, Հայ աւետարանական կերպարական բարձրագոյն վարժարանի, Ազգային Եղիշէ Մասուկեան քոլեճի, Հայ կաթողիկէ Մետրոպոլիտան քոլեճի, Հայ աւետարանական Շամսէն-Թաթիկեան վարժարանի, Հայ կաթողիկէ Մ. Կապրայեան Բարձրագոյն վարժարանի եւ Հայկազեան համալսարանի աշակերտներն ու ուսանողները:

- ԱՅՅՈՒՆ Զարծուի նախագահ, նախկին երեսփոխան Հասան Եսազուպ յայտնեց, որ Լիբանան պիտի օգտուի Իսրայէլի պարտութենէն, երբ բանակցութիւններու սերուն կարելի ըլլայ նստիլ: Եսազուպ յայտնեց նաեւ, որ Կապայի մէջ շարունակուող ցեղասպանութիւնը պատճառ պիտի դառնայ անոր բնաջնջումը: ●ՀՅԸՊԱԿԸԼԸՅԻ ընդհանուր քարտուղարի տեղակալ շէյխ Լայիմ Զասեմ յայտնեց, որ Իսրայէլ չի կըրնար յաղթել Հրդեհայլային, որովհետեւ ան կազմ ու պատրաստ է: Զասեմ կ'անուշտ տուաւ նաեւ, որ Հրդեհայլային համար նախագահական ընտրութիւնը ներքին լիբանանեան առաջնահերթութիւն է:

ՄԱԿ-Ի ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ ՄԷՁ...

Շարունակում Ա. Էջն

Այժմ, Մայիսի, Մոգանյանի, Կոլյանյանի, Սյուրիայի, Սիրեանի, Զուրաբյանի և Եղևատուրի կողմից պատրաստված նախագիծը կը կ'ուղղվի նախապես անօրինակ քաղաքացիական անվտանգության գոյացնել անօրինակ մարդասիրական զինադադար մը, որ մնալու զինադադարի կ'առաջնորդի, «առանց նախապայմանների» ազատ արձակել գերիները և վերացնել մարդասիրական օժանդակություններուն դիմաց «բոլոր խնդիրները»:

ՄԱԿ-ի մեջ Ռուսիոյ դեսպան Վասիլի Եմբոլովը արքայազն օր նշած էր որ Ապահովութեան խորհուրդին ներկայացուցած ամերիկեան նախագիծը քաղաքացիական անվտանգութեան նախագիծը քաղաքացիական անվտանգութեան նախագիծը «անորոշ է» և կը խուսափի ամենէն կեդրոնական հարցի» զինադադարի հաստատումը: Ան նշած էր, որ գոյութիւն ունի այլ նախագիծ մը, որ յստակ կերպով Կազախի մեջ զինուորական գործողութիւն կատարելու և անոր պատիժ խուսափել կ'արտօսէ:

Ռուսիոյ ներկայացուցիչը ասելով թէ Եր, որ Ապահովութեան խորհուրդի ոչ մնայուն անդամները Կազախի վերաբերեալ «ոչ քաղաքականացուած» այլ որոշում մը պատրաստած են:

Գիտատեղի դեսպան Զանկ Ընոն իր կարգին ըսած էր, որ Ապահովութեան խորհուրդը Կազախի մեջ զինադադարի դադարեցման որոշում որոշում է՝ որդեգրելու՝ ասելով, որ ամերիկեան նախագիծը «անորոշ է» և կը խուսափի ամենէն կեդրոնական հարցի» զինադադարի հաստատումը: Ան նշած էր, որ գոյութիւն ունի այլ նախագիծ մը, որ յստակ կերպով Կազախի մեջ զինադադարի հաստատում կը պահանջէ:

Այժմ, Մայիսի, Մոգանյանի, Կոլյանյանի, Սյուրիայի, Սիրեանի, Զուրաբյանի և Եղևատուրի կողմից պատրաստված նախագիծը կը կ'ուղղվի նախապես անօրինակ քաղաքացիական անվտանգության գոյացնել անօրինակ մարդասիրական զինադադար մը, որ մնալու զինադադարի կ'առաջնորդի, «առանց նախապայմանների» ազատ արձակել գերիները և վերացնել մարդասիրական օժանդակություններուն դիմաց «բոլոր խնդիրները»:

ՈՒՐԱՊԵՆԱԿՆԵՐ ԶԱՆԻ ՄԵՆ ՕՐԵՆ ԲԱՍԱԳՈՒՅՆՈՒԹԻՆ ԳՈՅԱՑՆԵՐՈՒ ԲԱՍԱՐ ԽՈՐՀԱՆՈՅ ԳՐԱՑ ԾՆԵՆՈՒ ԿԸ ԲԱՆԵՑՆԵ

Իսրայելացի բարձրաստիճան պաշտօնատար մը նշեց, որ Իսրայել համաձայն գտնուած է Միացեալ Նահանգներու առաջարկած լուծումին՝ ասելով, որ Իսրայել այժմ Զամասի պատասխանին կը սպասէ: Այս մասին երկ հարցրոց «Արապիա»-ն՝ յղում կատարելով Իսրայելի պետական պատկերասփիւռի կայանին:

Իսրայելացի այլ պաշտօնատարներ իսրայելեան «Ետիոթ Աիրոնոթ» օրաթերթին յայտնեցին, որ Զամասի դրակայն պատասխանին պարզագլխի իսրայելեան պատուիրակությունը անմիջապէս Տոհա պիտի վերադառնայ: Իսրայելեան արտաքին գաղտնի սպասարկութեան՝ Սոսատի տնօրէն Տաւտ Դեր-Նիադ շարք գիշեր վերադարձած էր Իսրայել, երկրի ղեկավարութեան Զայարի մայրաքաղաքին մէջ Զամասի հետ անուղղակի բանակցութիւններուն ընթացքին մասին զեկուցելու համար:

Իսրայելի պետական պատկերասփիւռի կայանը հարցրեց. «Իսրայելի մէջ այն կարծիքը կայ, որ Զամաս գործարքի առաջարկներուն վերաբերեալ իր պատասխանը 48 ժամէն պիտի տայ»:

«Արապիա»-ի համաձայն, ամերիկեան կողմը շարք օր Տոհայի մէջ բանակցութիւններու ընթացքին ներկայացուցած է առաջարկ մը, որ «կը մտնեն» իրաքեան իսրայելացի գերիի դիմաց պարզատիւնների բանտարկեալներու թիւին վերաբերեալ տեսակետները:

Ամերիկեան կողմը կ'առաջարկէ Զամասի մօտ գտնուող 130 գերիներէն 40-ը ազատ արձակել և 6 շաբաթ տեղադրութեամբ զինադադար հաստատել, ինչպէս նաեւ առաջարկած է մեղմացնել քաղաքացիներուն Կազախի հիւսիս վերադառնալու նախապայմանները:

Արաբները «ժազիրա»-ին յայտնած են, որ իսրայելեան կողմը մերժած է պատերազմը դադարեցնել, Կազախի իր ուժերը հեռացնել և տեղահան անելու առանց նախապայմաններու տուն դարձնել:

Արաբները ասելով թէ Եր, որ Իսրայել պահանջած է իսրայելացի գերեզարկուած զինուոր Կիլատ Ծալիթի ազատ արձակման գործարքին տեղ իր վերստին ձերբակալած գերիներուն վերստին ազատ արձակման դի-

մաց ազատ արձակել այս պատերազմէն առաջ Զամասի կողմէ գերեզարկուած իսրայելացի երկու զինուորներ Չատար Կոլտըն և Շաուկ Արոնը:

Իսրայել նաեւ նշած է, որ իրաւունք պիտի ունենայ գործարքի ծիրին մէջ ազատ արձակուած ցեղանէր բանտարկուած պաղեստինցիները վտարելու արտասահման:

Արաբական աշխարհի լրատու գործակալութիւնը իր կարգին հարցրեց, որ 40 իսրայելացիներ ազատ արձակելու եւ 6 շաբաթուան զինադադար հաստատելու շուրջ համաձայնութիւն գոյութիւն ունի, իսկ տարակարծութիւնը ազատ արձակուելիք պաղեստինցիներու ինքնութեան եւ թիւին շուրջ է, ինչպէս նաեւ տեղահանումներուն՝ Կազախի հիւսիս վերադարձի հարցին շուրջ:

Մինչ այդ, Իսրայելի պաշտպանութեան նախարար Եոու Կալանթ երկ հասաւ Ռաշինկթըն՝ ընդունաջելով իր ամերիկացի պաշտօնակից Լոյտ Օսթինի հրաւերին: Անոնք պիտի քննարկեն Ռաֆահի մէջ զինուորական գործողութիւնն ու անոր այլընտրանքները, ինչպէս նաեւ Կազա օժանդակութիւն հասցնելու մարդասիրական ջանքերը:

Իսրայելի պետական պատկերասփիւռի կայանը նաեւ հարցրեց, որ Կալանթ հանդիպում պիտի ունենայ «Մի.Այ.Ել.»-ի տնօրէն Ռիլիքմ Դընդի հետ:

Արաբական լրատուական դիւանագիտական աղբիւր մը երկ «Արապիա»-ին յայտնած է, որ Ռաշինկթըն, իր արտաքին գործը նախարար Էլթընի Պիլի-ժընի ճամբով, յստակ ճշումներ կը բանեցնէ Թել Աւիվ վրայ՝ բանակցութիւններու ընթացքին յառաջդիմութեան արձանագրելու եւ քանի մը օրէն գործարքի շուրջ համաձայնութեան հասնելու համար:

Իսրայելի պատկերասփիւռի 13-րդ կայանը հարցրեց. «Պիլիքըն Իսրայելի նախարարաց պատերազմի սեղմ խորհուրդին յայտնեց. «Նոյնիսկ եթէ Ռաֆահի մէջ զինուորական գործողութիւն կատարել, Զամաս պիտի գոյատեւէ»:

Ամերիկացի պաշտօնատար մը «ժազիրա»-ին յայտնած է, որ ամերիկեան դիւանագիտութեան պետը Կազախի բնակչներուն հիւսիս վերադառնալու հարցով ճշում բանեցուցած է Իսրայելի վարչապետին վրայ՝ Տոհայի բանակցութիւնները յառաջ մղելու համար:

Պիլիքըն վստահեցուցած է, որ բանակցութիւններու ընթացքին Ռաֆահի մէջ զինուորական որոշ գործողութեան շղթայագրումը Ռաշինկթընի աջակցութեան վրայ հետեւանքներ պիտի ունենայ:

Պաշտօնատարը «ժազիրա»-ին յայտնած է, որ Ռաֆահի գործողութեան վերաբերեալ Միացեալ Նահանգներու նախագահ Ճո Պայդընի եւ Պիլիքընի միջեւ տարակարծութիւնը լուծուած է ի նպաստ վերջինիս, որ զայն բանակցութիւններն ու Միացեալ Նահանգներու շահերը ակնահարող կը նկատէ:

«Պիլիքըն Նեանիախուի երաշխիքներ տուաւ պատերազմին յաջողով փուլի անոր ռազմավարութեան աջակցելու եւ Իսրայելի հետ արաբական երկիրներու յարաբերութիւններու բնականոնացման հովովյոթ յառաջ մղելու, եթէ ճկունութիւն ցուցաբերէ», ըսած է ամերիկացի պաշտօնատարը:

Ան նշած է, որ «Մի.Այ.Ել.»-ի տնօրէնը Տոհա մեկնած է, երբ Պիլիքըն հաստատու ստացած է բանակցող իսրայելեան պատուիրակութեան լիազօրութեան ընդլայնման մասին: «Լիազօրութիւնները կը ներառեն Կազախի հիւսիսը հարաւին կապող շրջանէն հեռանալու դասարաններու քննարկումը», յայտնած է պաշտօնատարը:

Միւս կողմէ, Իրաքի մէջ Իսլամական դիմադրութիւնը երկ յայտարարեց, որ կիրակի արշալոյսին անօդային թռիչք սարքերով թիրախարած է Թել Աւիվ մէջ Իսրայելի պաշտպանութեան նախարարութեան կեդրոնատեղին:

ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ԲԱՆԱԿԸ ԴԱՐՁԵԱԼ...

Շարունակում 2-րդ Էջն

Երկ կէտորին իսրայելեան օդուժը ընթացիկ արեւմտեան Պեքաայի Սուէրի շրջանին մէջ գտնուող ինքնաշարժ մը: Ռաբակոմմիսի պատճառով զոհուեցաւ սուրիացի քաղաքացի Մահմուտ Ռահմա:

Իսրայելեան ուժերը անօդաչու թռչող սարքերով, հրետանիներով եւ կործակիչներով ընթացիկ արեւմտեան վայրերուն մէջ գտնուող իսրայելացի զինուորներով բնակուած երկու շէնքեր եւ արձանագրեցին ուղղակի հարուածներ:

Դիմադրութեան մարտիկները թիրախարար հրթիռներով ընթացիկ արեւմտեան Սուիի շրջանին մէջ գտնուող իսրայելացի զինուորներով բնակուած երկու շէնքեր եւ արձանագրեցին ուղղակի հարուածներ:

Դիմադրութիւնը համապատասխան հրթիռներով ընթացիկ արեւմտեան Ռամմ գօրանքը, ինչպէս նաեւ անօդաչու թռչող օդային սարքերով թիրախ դարձուց կողպատեայ գմբէթի երկու հարթակները, որոնք կը գտնուին Զֆար Պլում իսրայելեան օդային խարիսխին մէջ:

Չըզապլայի զինուորական տեղեկատուութեան բնակուած Դիմադրութիւնը համապատասխան հրթիռներով ընթացիկ արեւմտեան Սուիի շրջանին մէջ գտնուող իսրայելացի զինուորներով բնակուած երկու շէնքեր եւ արձանագրեցին ուղղակի հարուածներ:

Եւ Բատար դիրքը եւ ուղղակի հարուածներ հասցուցած այն շէնքին դէմ, ուր իսրայելացի զինուորներ կը գտնուէին:

Չըզապլայի մարտիկները «Ֆալթ 1» տիպի հրթիռով ընթացիկ արեւմտեան Պայատ Պիլիտա դիրքը՝ արձանագրելով ուղղակի հարուածներ:

Չըզապլայի մարտիկները հակահրատայլային հրթիռներով ընթացիկ արեւմտեան Մալիքի դիրքն ու ինն գտնուող իսրայելացի զինուորներու համախմբումը:

Դիմադրութեան մարտիկները հակահրատայլային հրթիռներով ընթացիկ արեւմտեան Մալիքի դիրքն ու ինն գտնուող իսրայելացի զինուորներու համախմբումը:

Դիմադրութեան մարտիկները հակահրատայլային հրթիռներով ընթացիկ արեւմտեան Մալիքի դիրքն ու ինն գտնուող իսրայելացի զինուորներու համախմբումը:

Չըզապլայի մարտիկները Զիւսեյն Ալի Արսլան միացաւ «Երուսաղէմի ճամբուն վրայ» նահատակներու փաղանգին:

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՈՐՀԱՆՈՅ Աշխատանքները 2024

Ծանօթացե՛ք՝ հայկական շրջաններու խոհարարական բազմազանութեան մեր աշխատանքներուն ընթացքին, համալսելով պատմական 5 տարբեր շրջաններու ճաշատեսակները: Հմտացե՛ք մեր հայկական աւանդակաւ ունեւտները պատրաստելու արուեստին մէջ:

ՈՒՐԱԿ 12 ԱՊՐԻԼ

ՀԱԾԸՆ

- Ճիտապար
- Երջիկ
- Սարըպուրմա

ՈՒՐԱԿ 19 ԱՊՐԻԼ

ՈՒՐԱԿ

- Պորանի
- Սեմսեք
- Զերտ

ՈՒՐԱԿ 26 ԱՊՐԻԼ

ԱՅՆԹԷՊ

- Ճրագուկ կոլովակ (եանիլի քեֆթէ)
- Բանճարով-թահինով պեոնկ
- Այնթապի փախլավա

ՈՒՐԱԿ 3 ՄԱՅԻՍ

ՄԱՐԱՇ

- Ճեծածով դոլմ (Մարաշի բեչկէկ դապախի)
- Միւսճապար (չի քեֆթէ)
- Հափըսա

ՈՒՐԱԿ 10 ՄԱՅԻՍ

ՄՈՒՍԱ ԼԵՈ

- Հեւիս
- Գետնախնձորով կոլովակ (քեֆթէ)
- Քումպա

Եփել եւ պահպանել

Կէսօրէ ետք ժամը 5-էն 8

Հայկազեան Համալսարան

Մի՛ փախցնեք այս առիթը
cce@haigazian.edu.lb
+961 81 882 990

ԿՈՒՑՈՒԻ

Հաստատութիւն մը կարիք ունի հաշուապահի կամ հաշուապահուհիի մը: Դիմել՝ հեռ. 03-164767 թիւին:

ԿՈՒՑՈՒԻ

Հաստատութիւն մը կարիք ունի պաշտօնէներու՝

- Խոհարարի
- Պահակի
- Տնտեսի

Կեցութիւնը՝ ապահովուած, հետաքրքրուողները կրնան հեռաձայնել 70-719598 թիւին:

Տեսակ Տը

Թատրոն

Բեմադրիչ՝ Յակոբ Տեր Ղուկասեան

Տեղի կ'ունենայ 5, 6 եւ 7 Մարիլ 2024-ին
Երեկոյեան ժամը 8:30-ին
«Յակոբ Տեր Մելքոնեան» թատերասրահ

English Subtitles Available

Սակ՝ 5, 10 եւ 15 ամ. տուլար

ՀԱՄԱԳՈՒԾԻ ՔՈՒՄԻՏԵ՝ ԹԱՏԵՐԱԿՈՒՄԲԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՆԵՐԿԱՅԱՅՆԵ

«ԹԱՏՐՈՆ, ՄԵԱԿՈՅԹ ԵՒ ԱՄԵՆ ԻՆՉ, ԱՄԵՆ ԻՆՉ, ՄԵԱԿՈՅԹ ԵՒ ԹԱՏՐՈՆ»

Հանդիպում թիւ 2

ԼԻԲԱՆԱԼԱՔԱՅ ԹԱՏԵՐԱԿՈՒՄԲԵՐՈՒ ՀԵՏ
(Թատրոնի միջազգային օրուան առիթով)

Գործընթացի, 27 Մարտ 2024-ին, երեկոյեան ժամը 7:00-ին,
«Յակոբ Տեր Մելքոնեան» թատերասրահի բեմին վրայ:

Հրուէր՝ թատերասերներուն